

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀՆՉՍԿԵՍՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵՍՆ

ԱՐԻՒՆԻՆ ՀԱՐԿԸ

Արիւնի գրչերի մը մղձաւանջէն հազիւ արժնցած յոգնասպառ մտքերը՝ մերձեցող բարերար լոյսին առջև՝ ապաքինողի տարօրինակ ու յուզիչ լաւատեսութիւններ ունին: Չլատուած կորովները՝ ամէն տաղանայի վաղորդային՝ տեսակ մը բնական հակազգեցութենէ մղուած՝ արտաքին բացատրութեամբ մը ինքզինքնին հաստատելու պէտքը կը զգան: Ու անորոշ կամէութիւններու, վարանոտ խրատութեան, անվստահ քայլերու յատկանշական շրջան մը կը սկսի, ուր ամէն զլիւժէ ձայն մը կ'եղէ, ամէն ձեռք շարժում մը կ'ուրուագծէ եւ ուր ամենէն փութկոտները — իրաքանչիւրն իր ըմբռնման համեմատ — ազգային վերածնութեան գործը կ'ըստանձնեն:

Երկիւստան աղէտներէն ամիջուպէս յետոյ, անխուսափելի, գրեթէ ճակատագրական էր այս վիճակը Հայ ժողովուրդին համար:

Արիւնէն ճողոպրած ու կորուցած փախչող Հայը կարծեց թէ ա՛յլ ահաւոր վայրկեանը անցած էր: Յանգուզն ու անխորհուրդ քայլերու միայն վերագրեց Եղեոնին վիթխարի շղթայագերձուժը Հայ Աշխարհին վրայ: Իր թանկագին մորթը ազատած ըլլալուն զու՛ր իրեններուն անվերջ ջախջախումը զուտ մոռցաւ ան ու պատրաստուեցաւ վատ ու ետպական անշարժութեան մը: Ա՛յ զգուշանալու էր Բանութիւնը գրողելէ, ա՛յ տեղի տալու չէր թիւրքին ո՛ր եւ է տհաճութեան: Ու այսպէսով ամէն բան փրկուած կ'ըլլար: Կը մնար Յեղափոխութիւնը քանզի միանգամ ընդ միշտ երաշխաւորուելու համար ապագայ վտանգաւոր հաւանականութիւններու պէս:

Ու ժողովուրդի անակնկալ ախոյեաններ եղան իրարու ետեւէ, որոնք շտապեցին փրկութեան ճամբան ցուցնել Հայ շուարած ամբոխին, զայն իր յեղափոխական պարտաճանաչութենէն ետ կեցնել և անոր մէջ ինքնապաշտպանութեան ամէն արու տրամազրուութիւն սպաննել նկրտելով:

Հայութեան վերածնութիւնը փորձել յաւակնողներն էին առոնք: Ու ինչե՛ր չգտան, ի՛նչ հոյակապ ծրագիրներ չյղացան ժողովուրդը փրկելու համար: Մէկը վաճառականութեան բարիքները կը ներբողէր, հարկաւորաբար խարդախ տիրացումներու հետապնդումը հաշտեցնելով ազգային ազատագրութեան մաքուր ու խրախուսեալ ին հետ: Ուրիշ մը զպրոցներ բանալու և կրթութիւն տարածելու տարամերժօրէն մանկավարժական գործունէութեան մը մէջ կը փնտռէր ու կը գտնար Հայուն փրկութիւնը: Ամենքն ալ ահեղօրէն կը ծառանային յեղափոխական բրբօականտին դէմ, անոր մէջ մտանանիշ ընելով հանրային գոյութեան սպառնացող մշտական վտանգ մը:

Ժողովուրդը՝ հազիւ ուշաբրած ահաւոր Յնցումէն ու դեռ շուարումի ու անգիտակցութեան վիճակի մը մէջ՝ արամաղիր թուեցաւ ամէն ձայն լսելու, ամէն հրաւերի հաւանելու, ամէն խօսքի հաւատալու: Յեղափոխականները օակայն վայրկեան մը չընկրկեցան ու մինչեւ վերջը արիարար կուրծք տուին վատութեան ու մոլորումի հոսանքին ու ընդվզումի ու ինքնապաշտպանութեան փրկարար ու անողոք խօսքը շարունակեցին կրկնել ժողովուրդին:



Հայ ժողովուրդին մեծագոյն սխալը եղաւ կարծելը, թէ իւժգումութիւններու եւ աղէտներու շրջանը վերջնապէս, անդառնալիօրէն անցած էր, թէ մեր անշարժութիւններէն, մեր մեռելութիւններէն, մեր հաւատարմութեան ու մասնութեան երգումներէն կախում ունէր այլ եւս մեր բաղդին բարուցումը, մեր ազգային գոյութեան պահպանումը:

Յեղափոխականներն եղան միայն որ ճշմարտութիւնը ըօին ժողովուրդին, յեղափոխականներն եղան միայն որ զգուշացուցին ժողովուրդը ստրկական վատահոլութիւններէ ու մահացու գասալքութիւններէ, յեղափոխականներն եղան միայն որ յարատեւ ինքնապաշտպանութեան կենսական անհրաժեշտութիւնը քարոզեցին ժողովուրդին:

Ի՛նչ կ'արժէին վերածնութեան առաւել կամ նուազ տրամաբանական ծրագիրները, ի՛նչ օգուտ մեզի տնտեսա-

կան կամ բարոյական զարգացման պղատոնական ճի-
զերէ, երբ մեր կեանքը չէր զարգեր ամէն վայրկեան
վտանգի մէջ ըլլալէ: Թշնամին մեր բնաջնջումը ծրագ-
րած էր ու հանդարտօրէն, հաստատօրէն կը հետապնւ-
ղէր անոր: Այլ ի՞նչ կը մնար մեզի ընելիք: Այլ յեղա-
փոխական Կոնիւր ազատութեան ամեհի ճշտումէն չէր
հարկադրուեր միայն, այլ նաև, այլ մանաւանդ՝ մարդ-
կային, անասնական ինքնապահպանումի անդիմադրելի
բնազդէն:

* * *

Կը հասկնանք սակայն, թէ ի՞նչու յեղափոխական
բրօքականութիւնը այնքան չկամութեան բաղխեցաւ արտա-
սահմանի մէջ, առաջին աղէտքներէն վերջը: Առանց
բացատրութեան, բոլոր անոնք որ Յեղափոխութիւնը
խճճեցին ու վարկաբեկել ջանացին, ներքին միամիտ,
գրեթէ անգիտակից ապահովութիւնն ունէին թէ մեծ
վտանգը անցած էր ու ա՛յլ չպիտի կրկնուէր, եթէ Յե-
ղափոխութիւնը գաղթէր: Անոնցմէ է՛ն նենկամիտները
անդիմադրելի փաստի մը պէս գործածեցին, թունաւոր
զէնք մը ըրին իրենց՝ այն շնական սուտը՝ թէ Յեղափո-
խութիւնն էր միակ պատճառը տիեզերական խղճմտանքը
վիզովոյ Ոճիւրին:

— Ժողովուրդը ջարդել սուին... Ժողովուրդը ջարդել
պիտի տան...

Անոնցմէ է՛ն անկեղծները — եթէ եղան անկեղծներ
այդ դաւաճան ոգորումին մէջ — ջարդերու վերսկսման այս
անձուկ տեսակէտէն միայն կը նայէին Յեղափոխութեան
վրայ: Յեղափոխութիւնն էր, իրենց խելքով, թալան-
ներուն, բռնաբարութիւններուն, խժովութիւններուն ու ջար-
դերուն պատճառը եւ՝ եթէ վերնարան մէջտեղէն, ա՛յլ Հայը
հանգիստ պիտի ընէր իր պատուոյն, կեանքին եւ ինչքին
մէջ ապահովուած:

Զպիտի ելլենք՝ հարիւրերորդ անգամ ըլլալով՝ հաս-
տատել, թէ թրքական բռնութեան բոլոր այդ վայրագու-
թիւնները արգիւնքը չէին Յեղափոխութեան, այլ անոր
ուղղակի պատճառը:

Ու՛ եթէ Յեղափոխութեան ղեմ՝ ոգորողները կեղ-
ծիքի ու վատութեան անձնատուր չըլլային, եթէ իրենց
վայնասուններուն միացնէին գոնէ քիչ մը տրամաբանու-
թիւն՝ այն ատեն, իրենց կատարի հարուածները պիտի
ուղղէին այդ պատճառներուն ղեմ, որոնք հարկաւո-
րաբար կը ցնցեն, կ'ըմբոստացնեն, ոտքի կը հանեն
թմրած ստրուկը, որ կ'ուզէ պատուաւորապէս ապրելու ա՛յլ
չի կրնար հանդուրժել իրեններուն խողխողմանը, էր
աչքին առջէս:

* * *

Անշուշտ, Յեղափոխութիւնը, գործող, կուող Յեղա-
փոխութիւնը երգերով ու դիւրին պոռչուցներով չէ՛ որ
պիտի կատարուի: Արիւնը — գիտակից գոհողութեամբ ու
արիաբար թափուած արիւնը սակայն — անճշտագրելի
պայման մըն է Յեղափոխութեան: Ու մեծք տիեզերական
պատմութիւնը քրքրելու պէտք չունինք, հաստատելու հա-
մար թէ մերինին պէս անարգ ու զարհուրելի ստրկու-
թենէ մը անկախութեան հասած բոլոր ազգերը Աղէտ-
քի ճամբէն քալած են մինչեւ վերջը, խրոխտ ու
անվեհեր:

Այսօրուան «Երջանիկ Կրետէն» գեռ երէկ մեր տա-
ռապանքներովը կը խորովուէր: Քանի՛ քանի՛ անգամ կու-
տորուած, ջախջախուած՝ շարսափեցաւ երբէք մահէն
ու արիւնէն, ու **ՉՅՈՒՍՈՒՆԱՅԵՑԱԻ՛** իր փրկութեան ե-
րազները քանդող զմեղակ ձախորդութիւններէն: 1878ի
այնքան համբաւաւոր զաշնագրութենէն յետոյ իսկ, Հա-
մաի գործակատարները հարստահարեցին, քամեցին իր
կեանքը է՛ն խուժով ու է՛ն ընդվզեցուցիչ եղանակներով
ու քամահրելով բոլոր նօթերը, նաւային ցոյցերն և կեղծ
օպանալիքները մեծ կոշուած Պետութիւններուն: Մէկ
գարու մէջ հօթը ապօտաւարական պայթում ունեցան
Մինոսի զաւիւրները, եւ իրենց զիւցազնական բոլոր խօ-
յանքները արիւնի մէջ ինկան, խեղդուեցան շատ ան-
գամ: Բայց օր մը օրանց նահանջին ու դատալքութեան վատ
փորձութիւնը չունեցան անոնք, վասն զի անխախտ հա-
ւատք ունէին իրենց գատին արդարութեան ու յաղ-
թանակին ուշ կամ կանուխ իրականացման վրայ: Իրենց
արիւնին արդար վա՛րձքն է իրենց այսօրուան ազա-
տագրումը:

Կը ցաւինք որ ստիպուած ենք գեռ կրկնելու այն
հասարակ ճշմարտութիւնը, թէ կոխի ու մահուան ար-
հաւիրքներուն մէջէն, արիւնոտ քայլերով երթալ հար-
կադրուած են անոնք որ՝ Բռնութեան ղեմ ոտքի ելած՝
ազատութեան կը ձգտին, ու կ'ուզեն գոնէ մարդու պէս
ապրելու աարական իրաւունքին տիրանալ:

Հայ Յեղափոխութիւնը բացատրութիւն մը չի պիտի
կրնար անշուշտ ստեղծել Պատմութեան մէջ ու Հայը
չէ՛ որ՝ Ազատութեան տիրացումին պիտի յաւակնէր, խու-
սափելով Արիւնին ճակատագրական հարկէն:



ԱՉԱՏ ԽՕՍԲԵՐ

ԱՄՕՔ Է . . .

Ժողովուրդներու կեանքին մէջ վայրկեաններ կուգան, ուր անջատման ու անհամերաշխութեան բոլոր ամբար-տակները կ'իյնան, կը խորտակուին մէկէն ի մէկ, ուր անձնական, գասակարգային, կուտակցական ու յարան-ուանական բոլոր նկատումներն ու ոգորումները կը դադ-րին, կը լռեն, ուր շահահանգիր, փառատենջ ու նենգա-ւոր հակառակութիւնները ամօթահար կը պապանձին ու գաղափարական վեհանձն ու արգաւանդ ատելութիւններն իսկ կը գոպուին՝ Հայրենիքի գոյութեան սպառնացող անխուսափելի ու անողորմ վտանգին հանդէպ: Ազգային Հոգին է որ կ'արթննայ այն առեւն, խելայեղ ու սարս-ռագին թափով մը: Նայուածքները ակամայ իրարու կը հանդիպին, ներողամիտ ու անյիշաչար, ձեռքերը անբե-մաղբելիօրէն իրարու կ'երկնան, անվերապահ ու եղ-բայրական, ու իրարու կը խառնուին ու միահաղոյն կը տրոփեն սրտերը մէկ Հայրենիքի զակընդորուն:

— Ի՞նչ ընենք, եղբայր . . . երթա՛նք, եղբայր . . . նետուի՛նք, եղբայր . . .

Օ՛րհնաւոր ու անդիմազրելի եղբայրութիւնը անոնց, որ՝ Հայրենիքը զարնող աղէտքին առջեւ՝ կը մոռնան ի-րենց ամբողջ գոյութիւնը: Ա՛յ անհամաձայնութիւն, տա-րակարծութիւն, տարազաւանութիւն չեն կրնար արգելել հանրային խոռվքին սիրալի ներդաշնակութիւնը: Վտան-գէն վերջը, նորէն պիտի մաքառին անշուշտ իրարու դէմ, իւրաքանչիւրն իր սղար իտեպին կամ անանդ նկատումներուն համար: Այսօր սակայն ամենքը մէկ կողուիլ կը վազեն հասարակաց թշնամիին վրայ, ձեռք ձեռքի, խանդավառ ու եղբայրական արմկահարումներով:

* *

Ահա՛ ասանկ պարագայի մը մէջ կը գտնուի այս վայրկեանիս Հայ ժողովուրդը:

Եղեանը, ծրագրուած ու գիտակից Եղեանը՝ Հայու-թեան արիւնը իր դժնէ ափին մէջ պուտ պուտ նսնելով իր կարմիր ծարաւը անցնելու ժուժկալ վայրագութեան անկարող՝ կ'ուզէ անգամ մըն ալ արբենալ, յղփանալ, գինուփալ մեր արիւնովը, ու սրբէն բացած՝ ու Հայուն

եղկելի կոկորդին դրած է նորէն իր ահաւոր ու անկուշա երախը:

Մուշէն ու Սասունէն հասնող անձկութեան աղա-ղակները, մարդկային ժանգոտ խղճմտանքը թունդ հա-նող ուժգնութեամբ մը, զուժեցին խժգժութիւններու ու կոտորածներու նոր թուական մը:

Ունայն ու օսկալի խօսքերով ժողովուրդին ուշադրու-թիւնը մեզի դարձնելու համար չէ՛ր ուրեմն որ շնչա-պառ կը պոռայինք ասկից ամէն անգամ, թէ Հայու-թեան բնաջնջումը ծրագրուած էր ու կը գործադրուէր հրէշաւոր մոլեղնութեամբ մը, թէ պիտի ջարդէին ու պիտի ջարդեն շարունակ Հայ ժողովուրդը, մինչեւ որ համոզեն զայն ինքնապաշտպանութեան անհրաժեշտու-թեանը . . . եթէ հողին տակ մեռելները ալ պէտք ունին ինքնապաշտպանութեան:

Ի՛նչքերը, շարաշուք զէպքերը չեն ուշանար հաս-տատելու մեր ցաւազին նախազգացումները, մեր սրբա-ցաւ ազգարարութիւնները: Ասոր մէջ չենք փնտռեր հարկաւ ո՛ր եւ է անխիղճ ու զիւային գոհացում, մենք մեզի չպիտի ներէինք յաղթանակի Ոճիրին մեզ ըն-ձեռած ջախջախիչ այլ պիղծ փաստերովը, ո՛չ ալ հա-ճելի է մեզի աղէտոգում մարգարէներ ձեւանալ այս սուգի ու արիւնի օրերուն: Ո՛րչափ պիտի ուզէինք, ընդհակառակը, որ անիրականալի մնային մեր վախերը, ո՛րչափ պիտի ուզէինք երանութեան ու տօնի աւե-տիներ միայն տալ ասկից: Բայց պէտք է որ յանձն անենք վերջապէս ըսել այս ժողովուրդին անհրաժեշտ ու անողորմ խօսքը, որքան ալ որ մեր սիրտը արիւնի ու մեր շրթները զժուարին զայն արտաբերելու:

* *

Յեղափոխականները, իրենց հոգիին բովանդակ ու-ժովը, պոռացին, պոռացին, պոռացին, թէ թշնամին վճռած էր ու մինչև լրումը պիտի յամառէր Հայուն բնաջնջման իրականացումին, թէ ալ Հայութեան կամ-քէն կախում չունէր հեռացնել իր կեանքին դէմ լար-ուած, սազրուած Ոճիրը, թէ չի կար բան մը որ կարող ըլլար ողորդել Բանութիւնը ու զայն ետ կեցնել իր խուժ-ղում առաջադրութեանէն, թէ Հայութիւնը՝ եթէ տաճկնա՛ր ալ՝ նորէն պիտի ջարդուէր: Յեղափոխականները ի զուր կրկնեցին ու կը կրկնեն անգաղար, թէ ալ Հայուն ձեռքը չէր յեղափոխական ըլլալ կամ չըլլալ, թէ՛ Բը-նութեան անճողոպրելի, անզիջանելի ու անողորմ հա-լածանքին տակ՝ միակ բան մը կը մնար Հայուն, միակ ճարճարակ մը, միակ միջոց մը փրկութեան կամ պատ-ուաւոր անկումի— ինքնապաշտպանութիւնը:

Այս ողբալի ճշմարտութիւնները անգամ մըն ալ կրկնելու հարկադրուած ատեններս՝ ակամայ կանգ կ'առ-

նենք սակայն, ձայններնիս կոկորդնուս մէջ կարծես խեղդուած:

Աս ինչ ահաւոր բան է, որուն հանդիտատես կ'ըլլանք, առ որ աստիճան ալլասերած, անասնացած, փճացած ըլլալու է Հայ ժողովուրդը որ դեռ չի վրդովուիր, չի ցնցուիր, չի շարժիր:

Ժողովուրդներու գոյութիւնը վճռող տարածքը ու եղբրական վայրկեաններ կան, ըսինք, ուր ազգային հոգին խելայեղորէն կ'արթննայ... չէ՛, չէ՛ սակայն, Հայկական հոգին շարթննար, գոնէ մենք չենք տեսներ, այս պահուս, այդ ազնիւ ու օրտառու օթափումին նըշանները:

Անգին, արիւնը կը հոսի, կը յորդի հայրենի հողերուն վրայ: Աղէտքի ու քայքայման աղէկտուր ձայները պատառ պատառ կը հասնին հետզհետէ: Օտարներն իսկ կը յուզուին ու կ'երեւակայեն, կը թելադրեն, կը սպասեն որ Հայութիւնը այս անգամ տայ վերջապէս իր կենդանութեան, առնութեան ու գիտակցութեան կորովի ապացոյցները, բան մը ընէ, դիւցազնական փորձ մը ազատագրումի կամ ցաւի, յուսահատութեան ու կատաղութեան ահաւոր գերագրգռումի մը մէջ խենդենայ, նետուի, հրաշանայ ու մոլեգնօրէն զարնուի Բանութեան կուրծքին:

Օտարները, մարդկօրէն, ուրիշ կերպ չեն կրնար յղանալ Հայուն այս վայրկեանիս ոռնենայիք հոգեբանութիւնը: Ո՛րչափ կը սխալին օտարները ու որչափ մահացուօրէն պիտի արհամարհէին մեզի, եթէ ճանշնային մեզ ա՛յնպէս, ինչպէս որ ենք եւ ո՛չ այնպէս, ինչպէս կ'երեւակայեն օր ըլլալու ենք:

* * *

Աժօ՛թ է սակայն...

Աժօ՛թ է որ ազգային մահու եւ կենաց այս օրերուն, Հայը դեռ չի կրնար մերկանալ աստելութեան, նենգութեան ու մատնութեան երէկէն:

Աժօ՛թ է որ արտասահմանի մէջ Հայաստանի նոր խողովորումներուն գուժերը աննող հայերը, փոխանակ իրար անցնելու, տակնուվրայ ըլլալու և՛ իրարու մօտենալով՝ ճար մը, դարման մը մտածալու Հայրենիքի տազնապիչ վիճակին՝ թունաւոր ու վատ թշնամութիւններու վոլեգնութեանը մէջ կուրցած, անասնացած՝ կը շարունակեն զիրար ստորնացնել, զիրար հալածել, զիրար մնտել:

Աժօ՛թ է որ՝ երբ ամէն ժամանակե աւելի հայկական դատը պէտք ունի կարող ու անձնուէր ախոյեաններու՝ ամենէն աւելի կը հալածուին, կը քարկոծուին այն հազուադիւտ կամաւորները, որոնք՝ ազգային տաղնապի այս պարագաներուն՝ առաջինները կ'ըլլան նետ-

ուող, որոնք իրենց բոլոր կորուլը, բոլոր ձեռնհասութիւնը, բոլոր գործունէութիւնը կը փութան ի սպաս դնել Հայրենիքի փրկութեան գործին:

Աժօ՛թ է որ, մեր մէջ, դեռ ամէն անոնք որ՝ անկեղծութեամբ ու տարփանքով՝ հանրօգուտ խէլալի մը կը հետապնդին՝ ինքզինքնին բոնագատուած կը զգան շատ անգամ՝ զատուելով ազնիւ ու ջերմեանդ մտահոգութիւններէ՝ Ստուրեան ու Զրպարտութեան անարգ ու շնական յարձակումներուն դէմ մաքառելու ու ապահանութիւններ ու աղտեղութիւններ քրքրել ստիպուելով՝ հարկաւորաբար քիչ մը աղտոտուելու:

Աժօ՛թ է որ՝ երբ ամբողջ տիեզերք՝ աչքը Հայ Յեղափոխութեան օւկեռած՝ անկից կը սպասէ կացութեան վերջին բառը, անոր մէջ կը տեսնէ Հայուն ճակատադրին բարուքման միակ կարելիութիւնը՝ դեռ կը զրտնուին հայեր, որոնք կը տեսնան, կը ծրարեն, կ'երազեն Յեղափոխութեան մահը:

Աժօ՛թ է որ դեռ կը հանդուրժուին կարգ մը շոշոր տիրացուներ, որոնք՝ իրենց ճղճիմ ու աննշան անձերուն ցուցադրումին համար՝ հանրային ուշադրութիւնը կը նկրտին զարձնել էական ու ստիպողական մտահոգութիւններէ:

Աժօ՛թ է որ այսօր տակաւին Հայ Յեղափոխութիւնը ստիպուած ըլլայ հայերու դէմ մաքառելու, ներքին թըշնամիներու դաւերը ճզմելու:

Աժօ՛թ է որ յեղափոխականները դեռ կը հարկադրուին Յեղափոխութեան ստիպողականութիւնը բացատրել, ապացուցանել հայերու, երբ օտարները զայն ճակատադրական անհրաժեշտութիւն մը ընդունած են արդէն:

Աժօ՛թ է որ յեղափոխականները բոնագատուած ըլլան տակաւին պարտածանաչութեան ու գիտակցութեան դառնութիւնը Հայ ժողովուրդին:

Աժօ՛թ է ու ահաւոր բան մըն է որ գոյութիւն ու նենայ այսօր Հայութեան մէջ «Չէզոք»ներու օտուար ու անարգ մեծամասնութիւն մը, զոր չի կրնար ալլայել, չի կրնար թօթուել, չի կրնար շարժել Հայրենիքին կուրծքէն հոտող անվերջ արիւնը:

Աժօ՛թ է...

Եւ եթէ այս վիճակը պիտի շարունակուի անվախճանօրէն՝ Թո՛ղ Բանութիւնը մեր գերեզմանը փորէ Հայաստանի աւերումին մէջ: Պատմութիւնը — Աժօթն ու Փառքը հաւասարապէս սլահպանող — պատրաստ է Հայութեան Գիակին նուիրել յաւիտենական տապալանաբար մը, որուն վրայ չպիտի մոռնայ անշուշտ գրել. «Հոս կը հանգչի օտարու Հայութիւնը ... Զարգուելու արժանի ցեղ մըն էր»:

ԱՍՊՈՍԱԿՆԵՐԸ

ՄԻՆԱՍ ՕՂԼՈՒ

Ե.

ՄԱՐԱԳԻՆ ՄԷՉ

ԳՆԱՆԱՆԱՆԱՆԱՆ

Չէրքէզ ու Մինաս, տարբեր ուղղութիւններով երկար ատեն շնչառպառ վազելէ եւ անտառին բոլոր խորշերը որոնելէ, հոսուրաւել վերջ, Գարու Գաեաշի վրան նայող ապառձուտ ցցուածքին կատարը իրարու հանդիպեցան, երկուքն ալ սաստիկ յոգնած, երկուքն ալ բոլորովին յուսախաբ: Ճակատնին քրթնաթոր ու հասկարմիր՝ իրարու երես կը նայէին հիմա, կատողած առիժներու նման, որոնք իրենց ծանիբքին տակ ունենալ, իրենց երախին մէջ խածնել կարծած որոշ փախցնելէ ու անոր ընդունախ հետապնդելէ յետոյ, բանկարծ հեռի հեռի իրարու դէմ կ'ըլլան միկնոյն մոլեգին վազքին մէջ:

Չայրոյիքը, զոր այդ պահուն կը զգային անոնք անբացատրելի էր: Լուսեան՝ հակառակ կնիկ մը ըլլալուն՝ ասպատակի միայն յատուկ ճարպիկութեամբն ու ճկունութեամբը, անձեռնմխելի կը յամառէր մնալ իրենց: Ու կնկան մը առջեւ իրենց այս անկարողութիւնը անհանդուրձելի կը դառնար մեր կարիճներուն համար ու ամօթալի, անխոստովանելի պարտութեան մը պէս կը վիրաւորէր իրենց հայտուտ էրիկմարդու հպարտութիւնը: Ինչ որ աւելի կը զրգոտէր, կը կատարեցնէր զիրենք՝ Լուսեային, նոյն պահուն, այդ տեղուանքը ըլլալուն բացարձակ վստահութիւնն էր: Չէրքէզ ու Մինաս բնաւ տարակոյտ չունէին թէ այդ կնիք հոտ, իրենց շատ ծոռ էր: Այնքան ապահով էին ասոր, որ՝ տարօրինակ ինքնաթիւղորութեամբ մը՝ անոր շունչն ու հեւքը լսել կը կարծէին ու անոր անտակ ու շնական խնդրքին վերջովի՛ք բահբահները, մշտական ձայնարկութեամբ մը իրենց ականջին կը հնչէին:

Երկու արծիւները՝ իրենց մոլեգնութենէն լեզուին բռնուած՝ քով քովի թառեցան այդ բարձունքին վրայ եւ իւրաքանչիւրը միկնոյն խորհուրդով մտազբաղ՝ սկսան՝ զամօթօրէն՝ իրենց առջեւ հարաւէն հիւսիս փոռող Եշի Ըրմագի անգնդախոր ձորամէջը դիտել: Անտառներու թաւախ շարքով մը եզերուած՝ իր աղմուտ ու գեղնագոյն շուրթերը երկու ափերուն խփելով՝ գետը, վիշապի մը գալարումներովը, զէպի Սեւ Մով կը սողար:

Իրենց սաքերուն տակ, գետակովտին ձախ լանջին վրայ, կը բարձրանար Գարու Գաեա զուղը: Տենդոտ կենդանութեամբ մը լեփ լեցուն կ'երևար ան, տունէ տուն երթելէ հեղութեան արտակարգ հոտանք մը կար: Մինասի աչքերը անզգալարար իր հայրենի երդիբքին վրայ հանդիպեցան ու երկուքն ատեն չի կրցաւ անկէ հեռացնել իր սեեռուն նարուածքը: Ունքերը պոստած, կոպերը լայն բացած, մագնիսացածի պէս քարացեր կեցեր էր ան: Ու ահա հետզհետէ դուրս եկան իր նրկու պղտիկները, իրենց մօրը հետ միասին: Իր ծերացած մայրն ալ երկցաւ: Ճերմակ լաշակը հովին տուած՝ պառաւ Ծուշանը, առանց դեղակելու, տակաւին երիտասարդի պէս շիփ շիտակ կը քալէր: Այս ու այն տուններէն պիղագի կնիկներ մէյ մէկ փսքրիկ ծրար ձեռներնին՝ անոր կը մօտենային, ու մինչեւ գիւղէն դուրս ելլելը, ծրարներու ահագին բնուան մը ծանրութեանը տակ կըսած էր ան, առանց իր յոգնութիւնը մասնելու: Ասպատակներուն համար նուէրներ էին ատոնք, ու ամէն գիւղացի կին չէր՝ ուզեր զուրկ մնալ այդ սրտաբուխ ու շերմեանդ մասնակցութենէն:

Այդ տեսարանին հանդէպ՝ Մինաս արդէն մոռցած էր ամէն բան: Լուսեան, որ քիչ մը անդին պահուրաւ էր անշուշտ, ու Չէրքէզը, որ իր քովն էր, կարծես ա՛լ գոյութիւն չունէին իրեն աչքին: Ու կարիճին սիրտը՝ հայրական գործով զեղուն՝ զէպի իրենները կը վազէր: Իր մարմինովն ու արիւնովը շողուած էին այդ պղտիկները, որոնք՝ առոյշ ու թեթևաւուն՝ իրենց մօր ու մամիկին շուրջը կը ցատկոտէին: Անոնք իր կայտառ ու ամենի մանկութիւնը կը ներկայացնէին իրեն: Չանոնք խանդակաթ սիրով մը կը սիրէր թափառական հայրը, բայց նուիրական կոխիւն պաշտուած ու տարփանքը նոյնքան ու աւելի հզօր էին իրեն մէջ, ու այդպէս զատապարտուած էր ան կարօտը քաշելու անոնց գգուանքին ու հագուազէպ պարագաներու մէջ միայն՝ անտառին խորը, ամալի առանձնութեան մը մէջ, քանի մը պատահական համբոյրներ կարող կ'ըլլար գործել անոնց կարմիր, արենադոյն թուշերուն, արագ ու յեղակարծ համբոյրներ, որոնք իր հայրական գորովի պապակը յագեցնէրու անբաւական՝ ա՛լ աւելի կը զրգոտէին զայն:

Հոտ, բաւական երկար ատեն, իր մտախոհ գիւրջին մէջ արձանացած մնալէ վերջ, Չէրքէզ մէկէն ի մէկ սթափեցաւ, ինքզինքին եկաւ եւ անմիջապէս իր միտքը զէպի մարագին մօտ թողուած քաջերը թուաւ: Ինչ պիտի մտածէին անոնք, երբ՝ արթննալէ վերջ՝ իրենց երկուքին բացակայութիւնը նշմարէին: Փոքրիկ վտանգ մը կրնար զանոնք իրարանցումի ենթարկել: Չգուշութեամբ մը ձեռքը Մինասի ուսին դնելով՝ զայն ցնցեց: Մինաս՝ քունէն նոր արթնցածի պէտ՝ վեր ցատկեց եւ Չէրքէզի ներկայութիւնը տեսնելով, բոլորովին սթափեցաւ:

—Օ՛, շո՛ւտ, տղոցը մօտ երթանք, ըսաւ ան, կա- տարեալ խնդութիւն է մեր այս պահուս հոս ուշանալը, հիմա տղաքը անհամբեր մեզի կը սպասեն:

Չէրբէկ իր խմբապետին երեսը նայեցաւ: Մինասի աչքերը թրջած էին: Երկուքը մէկ ճամբայ ինկան դէպի մարագ, ուր բարեկամ ու ազդական՝ Խումբին Ֆաթմա ընկերներուն շուրջը հաւաքուած՝ իրենց յանկարծական աներևութացման վրայ զարմանահար՝ մտատանջութեան մատնուած էին:

Երկու կտրիճներուն վերերևուած զանոնք ապահով- ցուց, ու ամենքը մէկ դէպի մարագը գիմեցին, ուր երկար սփռոցներու վրայ զիւղական ճոխ սեղան մը պատրաստուած էր:

Վարժապետն ալ եկեր էր: Իր սովորական տխրու- թիւնը ձգած՝ ուրախ զուարթ ամենուն հետ կը շաղ- փազփեր ան:

Հոն էր Կապետի հայրն ալ, ծերունի Մարտիկը, որ՝ իր առօրեայ սովորութեան համաձայն՝ իր մէկ ձեռքը փորին վրայ դրած կը պտտեր, ամենուն հետ շատա- խօսելով ու ամենուն ցոյց տալով Կապետը, որուն վրայ օրտանց հպարտ էր և սակայն երեսանց մեղադրանքի խօսք մը ունէր միշտ: Ան էր որ մօտաւորապէս ութը տարի առաջ իր անառակ հօր շահատակութիւններուն վերջ մը գնելու համար, գնդակով մը, անոր պորտը ծա- կեր էր: Վարժապետը, Յովհաննէսն ու Կապետը զայն շրջապատեր էին ու անոր իւրաքանչիւր խօսքին ան- ընդհատ կը խնդային:

—Կայէնի պատիժն է որ կը քաշէ, ըսաւ Վարժա- պետը, քիչ մը խղճահարութեամբ թող վարուէիր գիւ- ղացիներուն հետ, մտածելով անգամ մը, որ անոնք ալ քեզի պէս Հայ են:

—Իր Հայ ըլլալուն վրայ ինքն անգամ կը կաս- կածէր այն ատենները, միջամտեց Յովհաննէսը:

—Անառակը գաստ շատ լաւ տուաւ, ըսաւ ծերու- նին, պորտս ծակելէն ի վեր քան զհայը հայ կտրեցայ:

—Եթէ չըլլայիր՝ ուրեք գնդակ մըն ալ պատրաստ էր, ըսաւ Կապետը ծիծաղելէն:

—Ա՛, գու հայրասպան սրիկա՛յ, յարեց ծերունին, երկու ձեռքով Կապետին ուսերէն բռնած ցնցելով, «Ո՛չ յԱստուծոյ երկնչիք եւ ոչ ի մարդկանէ ամաչէք»:

—Ճիշտ քեզի պէս, ըսաւ Կապետը, միայն գնդակը Աստուծոյ վախը մէջդ արմատացուց, եթէ դժոխքի դուռ- նէն քանի մը անգամ ետ չգայիր՝ խելօքնալիք չունէիր, ու քու երեսեղ ամբողջ գիւղը կրակը պիտի երթար:

Այդ միջոցին Պառաւ Շուշանը, իր հարսներովը ու թոռներով մարագը մտաւ: Իր կոնակի բեռը վար գնե- լէ վերջ, յաջորդաբար Մինասին ու Յովհաննէսին վի- զը փաթտուեցաւ: Օրերով, ա՛խսներով, անոնց կարօտը քաշեր էր ու վայրկեանի մը մէջ, քանի մը արցունքոտ համբոյրներով, չէր կրնար իր մայրական այրած սիրտը

յագեցնել: Դեռ հազիւ տարի մը կար, որ իր երրորդ տղան, Պօղոսը, թիրքի գնդակին զոհ էր գացած, իօկ Մինասն ու Յովհաննէսը՝ իրեն համար՝ արդէն կէս մե- ոած կը համարուէին, քանի որ անոնց ամբողջ կեանքը վտանգնելու մշտական դիմագրաւումին դատապարտուած էր: Իր զակընդորուն կարօտը որքան որ ալ կը մարմո- քէր Պառաւ Շուշանին սիրտը, անոնցմով չափազանց հպարտ էր սակայն ինքը, կարծես իր կորիւններուն սխրագործութիւնները իր վերջացող կեանքը կը սնու- ցանէին, զայն կանգուն կը բռնէին: Իր ալեւոր ու կըքած ծերութիւնը վրէժով կազդուրուած, երիտասարդացած՝ ամէն անգամ որ իր Մինասին ու ընկերներուն քանի մը թիրք սպաննած ըլլալուն լուրը կ'առնէր՝ այդ օրը իրեն համար աօնախմբութեան կը յատկացնէր ու ձեռ- քին տակ ունեցած ալիւրն ու միսիբը լաւաշ ու նկա- նակ շինելով՝ զիւղացիներուն կը բաժնէր, ու օրը երկու անգամ եկեղեցի վազելով՝ Աստուածածնայ պատկերին առջև մօմ կը վառէր ու ժամերով ծնրադրած կ'ազօթէր:

—Տեօէք, ինչե՛ր եմ բերեր ձեզ համար, ըսաւ ան, և սկսաւ մէկիկ մէկիկ ծրարները բանալ:

Ամէն տեսակ կերակուրներ կային հոն, հաւկիթ, ձուազեղ, չոր միս, մեղր ու անուշեղէններ, իրենց տե- սակներովը: Ամէն տանտիկին իր ձեռքին տակ ունե- ցած պահեստի իւրօտ պատառը Հայրենիքի կամաւոր- ներուն ուղարկեր էր:

—Մէթալիկին ու Բգիր Սրղոմոնին կիներն ալ չուզեցին անմասն մնալ, ըսաւ Շուշանը, երկու խօշոր մեղրի պաններ ցոյց տալով, շիտալը հրեշտակի պէս կնիկներ են երկուքն ալ, իրենց էրկիները, շան սատա՛կ ելլան անոնք, մրթմրթաց Պառաւը, իր չորցած բոունցքը օդին մէջ շարժելով սպանալից:

Մէթալիկի ու Սրղոմոնի անունները ասպատակ- ներուն դէմքին վրայ զայրոյթի ու զգուանքի ծամածը- ութիւն մը դրին: Բայց չուտով հանդարտեցան: Իրենք ալ շատ մօտէն ծանօթ էին անոնց կիներուն, որոնք՝ նեղ օրերու մէջ՝ շատ անգամ զգուշացուցեր էին աօ- պատակային խումբը դաւաճան օտարանքներու դէմ, թա- քըտոցներ պատրաստեր ու կերակուր հասցուցեր էին անոր, իրենց էրկիներէն գաղտնի: Բաղդը՝ կոյր ու ա- նողոք տնօրէնութեամբ մը՝ ազնուութիւնն ու անձնուի- բութիւնը տարեր աչարգ շահախնդրութեան ու քստմեղի մատնութեան գիրկը տուեր էր: «Եւ զօր Աստուած զուգ- եաց՝ մարդ մի՛ մեկնեցօք» կարդացեր էր տէրպապան, իրենց կուսական մաքուր ճակատները դաւաճանութեան պիղծ ճակտին միացնելով: Ու հիմա այդ կրկու տիպար հայուհիները դատապարտուած էին մինչև շերտման քաշկոտելու «մատնիչի կին» ըլլալու անջնջլի արտաբ:

Գիւղական այդ սրտառուչ համախմբումին մէջ ա- մենուն աչքին վարնողը Պաղտատարն էր: Իր քաղցնիկ յանկուցիչ պէմքը կը ցուցնէր թէ ան չարքաշ կեանքի

բրտութիւններուն մէջ չէր ապրած: Իր փափակ ու ողորկ դիմադրութեամբ, նազելի շարժումները ու նուրբ արտասանութիւնը կը մասնէին արդէն անոր ազնուական ծրնունքը: Ու կիներն ու աղջիկները, որոնք իր շուրջը բոլորած էին, հազար ու մէկ միամիտ ու անխորհուրդ հարցումներով կ'աշխատէին անոր հոտ ներկայութեան գաղտնիքը հասկնալ: Իրենց կեանքին ո՞ր փայլուն կողմէն էր որ զայն հմայած էր, ինչ տարօրինակ հրապուրտեամբ էր ան իրենց ստրուկ գեղջուկի նիստ ու կացին մէջ:

— Ատեն մը քաղաքացիները մեր այս լեռներուն մէջ երևնալն անգամ անպատուութիւն կը սեպէին, ըսաւ աղջիկներէն մէկը, հիմա մեզի հետ սեղանակից կ'ըլլան ու մեր օւ հացէն խորով կը զգան:

— Մեզի գնչու կ'անուանէին ու հետեւին խօսիլը ամօթ կը սեպէին, միջամտեց ուրիշ մը:

— Ամենայնոք չէր չին մեր պատրաստած անկողինը քանի մը անգամ չի քննելէ վերջ, հոն պառկել յանձն չէր առնէր, ըսաւ երրորդ մը:

— Մեր եփածներուն չէին հաներ, իզը կծու կը գանէին, մեղրը լեղի կ'ըլլար և ուրիշ ամէն տեսակ պակասութիւն կը կենար մեր ամէն բաներուն մէջ:

— Է՛, ճահիլի խօսքեր պէտք չեն, մէջ նետուեցաւ Պառաւ Շուշանը, նորհաս աղջիկներու քանի մը հատը կ'սկսէր լսել, չէ՞ք տեսներ որ հիմա ամէն բան փոխուած է եւ Յարութիւնէն սկսած մինչեւ այս աղւորիկ երիտասարդը մեզի հետ ապրելուն մէջ հանգստութիւն մը կը գտնեն:

Պաղտասար՝ մինչև ականջները կ'սկսէր լսել իր արած լուռ կը մնար, և և է պատասխան չկրնալով գտնել գիւղացի կիներուն այդ արդար նկատողութիւններուն: Երբեմն մեծ յուսախաբութիւններ ունեցեր էր: Դպրոցի գրասեղաններուն առջև, գաղափարական Հայութիւն մը ընդնշմարեր էր իր թարմ ցնորքներուն մէջ: Պատմութիւնը, երկար ատեն, առօրեայ կեանքի գիւղացիներու օրը-րա գործութիւններովը կերակրեր էր անոր երևակայութիւնը: Երբ պատեհութիւն ունեցեր էր Մեծ Հայքի շատ մը հայաշատ քաղաքներն ու գիւղերը պատելու ամէն տեղ մտնելու, ամէն տեղ դարաւոր ստրուկութեան մը խոռոչացած հետքերը տեսեր, կոխեր էր: Իր կարգացած, իր երազած հայերուն չէր հանդիպեր: Քննող, քննարկող, աղերսող արարածներ էին ատոնք, դիւցազնութեան, առնութեան ամենազոյզն բեկորն իսկ գտնել կարելի չէր անոնց մէջ: Այլատերած մարդութեան մը տարօրինակ խառնուրդը կը ներկայացնէին անոնք: Կոռուելու, ինքզինքնին պաշտպանելու, ազատ ապրելու ոգին մեռած էր անոնց մէջ: Ստրկութեան գիրկը մխրճուած՝ դիակնացեր մնացեր էին հոն: Ո՛չ ընտանիք, ո՛չ պատիւ, ո՛չ ինքնուրոյնութիւն եւ ո՛չ ար-

ժանապատուութիւն գոյութիւն ունէին անոնց համար: Թիւրքին ու Քիւրտին կամայականութեան առջեւ տափակցած՝ զեպի անորոշ ու անյոյս ազգայն կը քաշուողէին: Ընկերային այդ շրջանին մէջ ամենէն աւելի աչքի գարնող երևոյթը՝ կնոջ ողբալի դիրքն էր: Ստրկութեան մէջ անասնացած՝ բանականութենէ զուրկ էակներ էին կարծեօր Զիրենք շրջապատող ահ ու գոշին մէջ շրջուած՝ Քիւրտին ու Թիւրքին սարսափոգը կը մեծցնէին իրենց զակերները: Ու այդ պատիկները վաղուան Հայութիւնը պիտի կազմէին:

Լեռնագաւառի այս անշուք անկիւնին մէջ սակայն ամէն բան տարբեր էր: Էդիմարդիկը՝ զենքի տակ մեծցած՝ կռուիլ, սպաննել գիտէին. արիւնը անոնց զուարթ չէր պատցնէր ու գնդակի շփոցները երջերու հաճոյքը կուտային անոնց: Կնիկ մարդիկը՝ ազատ ու համարձակ՝ իրենց սեփական կարծիքն ու կամքը ունէին:

Պաղտասար բոլորովին տարբեր միջավայրի մը մէջ գտնել կը կարծէր ինքզինքը: Իր պատանութեան շքեղ երազները ահա՛ հոտ, մասամբ կ'իրականանային:

Հոն էր Վարժապետը, Գաղափարին ներկայացուցիչը, որ իր դերին խորունկ գիտակցութիւնն ունէր: Հոն, իրարու քով շարուած էին հայ քաջերը, Մինաս, Զեքեղ, Յովհաննէս, Կապետ, Գեորգ եւ ուրիշներ, որոնք ազատամարտի, յամառ ընդդիմութիւնը, յեղափոխական կոխը կը ներկայացնէին և որոնք համար Մահը մեռած էր:

Ահա՛ կիները: Եւ շուտով անոնց բերնին գալլ չէր դրած: Անոնք ազատութեան, համարձակութեան մարտերն էին: Անոնք յաճախ իրենց էրիկներուն կոխի մէջ առած վերքերը՝ փոխանակ լալկան արցունքներով թրջելու՝ անընդմեջ ու անկուշտ համարներով կը ծծէին, կը ցամքեցնէին: Անոնք Հայոց հին յարալէզներն ըլլային կարծես, սր կեանքի է՛ն թովիչ ու հմայիչ փաղաքանքներով իրենց պայքարելէ, մարտնչելէ անխոնջ բայց կոխին մէջ զարնուած ամուսնուն հսկայ մարմինները կը հանգչեցնէին ու անոնց ցաւը կը քնացնէին: Իրենց պատիկները Թիւրքին առջևէն չէին փախչեր սարսափահար, այլ բուռցնին կը սպաննային անոնց օր իրենց մանկական նետ ու աղեղներով հարօտածել կ'ոգորէին զանոնք: Իրենց քաջորդիի բնազէն մղուած, թելադրուած, առաջնորդուած՝ անոնք կը զգային կարծես, թէ Հայութեան ազգայնորեն ու թշուառութեան պատճառը թիւրքն էր, ու իրենց այդ թիզ մը հասակէն սկսած՝ այլազգիներու զէմ կռուելու, անոնց հետ չափուելու մարզանքին կուտային ինքզինքնին:

Պաղտասար, այդ ներ միջավայրին մէջ, ազատագրուած Հայութեան մը դրօշմը նշմարել կը կարծէր ամէն բանի վրայ:

— Դուն արդէն ծանօթացեր ու բարեկամացեր ես մեր օրիորդներուն հետ, ըսաւ Վարժապետը Պաղտասարին զանալով:

—Աղջիկները զայն իրենց հետ բռնի բարեկամանալու ստիպեր էն, ըսաւ Պառաւ Եուզանը, իր ծեր ազուկսի աչքերը անոնց վրայ անկելով ու ջատուկ վհուկի մը պէս ժպտելով, շնոս գիտեք որ մեր աղջիկները կտրին ու աղուոր տղաքներուն ետեւէն կը վազեն, Հերիք է որ անոնք թիւրք սպաննել գիտնան:

Մամիկին այդ անխորհուրդ խօսքին վրայ՝ աղջիկները շիկնած, խեղդպցած՝ բռնագրօսիկ սրամտութեան նայուածքներ արձակեցին Պառաւ Եուզանին երեսին:

—Քա՛, քարը գլուխնուդ, ըսաւ Պառաւը, կարծես թէ զիս պիտի բզջտեն, մեր ժամանակը ճահիլ աղջիկները տան անկիւններուն մէջ պահուցուած կը մնային, իսկ դուք՝ անտառին մէջ միշտ կը սիրաբանիք, չամչցածներ...:

—Քիչ մը արիւնսով մկրտուելդ վերջ, քեզի ալ մեր զիւղացին կը շինենք, միջամտեց վարժապետը Պապ տասարին զարձած,

—Ծիածանին հետ նշանելով, սպրդեցուց շարածճի Պառաւը, վարժապետին խօսքը կտրելով:

Ծիածանը—գեղին է՛ն աղւորը—իր ընկերուհիներուն ետին պահել փութաց իր վարժագոյն ու ամօթխած դէմքը, շեղակի նայուածք մը գողունի յանգնելով Պապ տասարին դէրայ, որ, ինքն ալ, չափազանց վրդովուած կը թուէր:

Ինչ հակադրութիւն, կը մտածէր Պաղտասար, այդ լեռնջլներուն ու անոնց միջեւ, որոնց հետ ապրած էր ինքիւր ամբողջ կեանքը և որոնցմէ զատուած, հեռացած էր, իր ընդվզող հոգիին վայել միջավայրի մը ի խնդիր: Հոս թիւրքը սաք կոխած չէր կարծես: Հոս ալ անշուշտ անպակաս էին թալանն ու արիւնհեղութիւնը, բայց այս մարդիկը վրիժառութեան ոգին ունէին, իրենց գոյութեան կոխը գաժանօրէն կը մղէին ու երբէք չէին ձգեր որ թող ու սարկական յուսահատութիւնը ներս սպրդի իրենց սուններէն ու մթազնէ իրենց օձախնները: Հո՛ս կ'ապրէին:

Ասպառաջներուն երանութիւնը չափ չունէր: Իրենց այրիներուն կողքին ու իրենց սրբերը գողերին՝ իրարու վրայ նայուածքնին կախած՝ իրարու կարօտ կը ծծէին ազատութեան կոխին համար իրարմէ կամովին ու յարածամ այրիացած ու որբացած էակները:

Մինասի երկու մանչերը, իրենց հօրը թեւերն ի վեր մաքցելով՝ զէնք կ'ուզէին անկից:

—Տապանճա տո՛ւր մեզի, հայրի՛կ, կը պոռային անոնք:

—Չօպան Հիւսէյինին աղան պիտի սատկեցնե՛մ, կ'ըսէր անոնցմէ մէկը, անցեալ օր ինծի հայհայեց...:

—Ես Ղատիր Աղային տղան պիտի զարնե՛մ ևս ու վճովէրը ձեռքէն պիտի առնեմ, կ'ըսէր միւսը...:

Ու հայր անիւծը՝ հպարտ՝ աչքերը ծուռ կուտար իր

գոյգ մը կորիւններուն վրայ ու սիրտը ուրախութեամբ լեցուն կը տրօփէր: Ան վստահ էր հիմա թէ իր մեռնելէն վերջը իր կտրիճի յիշատակը չպիտի աղարտուէր ու կը զգար թէ իր կտակած զէնքերը չպիտի գատապարտուէին ժանգոտելու:

—Սեղանը պատրաստ է, գոչեց վարժապետը, երկու ձեռքերը քանի մը անգամ ծփփ տալով:

Քիչ մը վերջը ամենքն ալ զիւղական սեղանին շուրջը բոլորուած էին:

Մաղմաղ կրակի վրայ խորովուած ոչխարը—քաշերու ի պատիւ մտրթուած մատաղ մը—սփռոցին վրայ կը տարածուէր, ախորժարի ու փորձող: Այդ օրհնեալ կենդանին առկից աւելի արժանաւոր խնջոյքի մը արգարօրէն չէր զոհուած: Միօրի թարմ նկանակներ, դեռ հազիւ սաճերու վրայէն վար անուած՝ տաք տաք բուրբոսով մը մարագը կը լեցնէին, ասպատակներուն ախորժակը գրգռելով: Գինիին տեղը կը բռնէր թանը:

Պառաւ Եուզանը՝ թեւերը սոթտած՝ մէկ քաշէն միւսը կ'արտորար, իր բերած ծրարներէն ամենուն բաժին հանելով:

Կարճ աղօթքէ մը վերջ, զօր կապետի հայրը, Մարտիկ շերմեռանցօրէն մթմթաց, վարժապետը՝ վերցնելով իր պղնձէ ըմպանակը՝ խօսք առաւ, մինչ երկիւղած լուրթեան մէջ, իրենց վերջին պատառը անձամ կուլ տալով, ամենքն ալ ոկսան ուշադրութեամբ անոր մտիկ ընել:

—Առաջին գաւաթը մենք կը խմենք մեր կտրիճներուն կենացը, անոնց որ՝ իրենց գոյութիւնը մոռցած, իրենց հանգիստն ուրացած ու իրենց հարազատ օրբելիները թողած՝ մեր ամենուս ազատագրումին կռիւր կը մղեն: Անոնք հաւատքն ունին թէ մինչեւ օր թշնամիին արիւնը չոռոզէ մեր հայրենիքը, մինչեւ օր սուրը չխաղայ մեր կտրիճներուն ձեռքին մէջ, մինչեւ օր Քիւրտն ու Թիւրքը ու Հայութեան բոլոր հարստահարիչները արիւնելու գաղտնիքին շտիրանանք՝ ազատութիւնը չի մօտենար մեր շէմքին: Անոնք ըմբռնած են թէ՛ մեռնելէ աւելի ու մեռնելէ առաջ՝ մեռցնել զիտնալու՛նք: Ասոր ապացոյց, ահա՛ իրենց մահւան գործիքները, Մինչեւ օր Հայութիւնը անոնց հոգիովն ու մտածումովը շտոգորուի, անոնց ճամբէն չվազէ՝ մեր գերութեան շղթան չի խորտակուիր: Ասոնք Հայ ապրտտամբութեան նախակարապետներն են, Հայ Յեղափոխութեան առաջին կամաւորները, ու անոնց անմահ կեանքերուն համար կ'արժէ՛ որ մեր առաջին բաժակը պարպենք...:

Պաղտասարը՝ թանի լեցուն աման մը ձեռքը՝ գեղեկով մը ոսքի ելաւ: Կեանքին մէջ առաջին անգամ էր որ այսպիսի տարօրինակ սեղանի մը շուրջը կը գտնուէր: Հոտ ամէն բան նահապետական, ամէն բան զիւղական ու պարզ էր:

Պաղտասար իրեն պիշ պիշ նայող քաջերուն վրայ
ակնարկ մը նետելէ վերջ՝

— Մինչեւ գերեզման ձեզի հետ եմ, ընկերներ, ըսաւ, փղձկած ձայնով մը, Հայութիւնը իր գարգացած, գիտնական ու քաղաքակիրթ գաւակները ունեցած է, Հայութիւնը՝ արկղերնին ոսկիով լեցուն միլիոնատերներ ունեցած է, Հայութիւնը ուրիշ ազգեր երախտաւորող քաղաքագէտ ու զինուորական հանճարներ ունեցած է, Հայութիւնը շատախօս հայրենասէրներու սերունդներ ունեցած է, բայց Հայութիւնը իր գոյութեան, անկախութեան ու ազատութեան համար կռուող, իր վրայ բռնացող թիւղքին ձեռուները կտարբարող ու կտրուող ծակող մարդասպաններ չէ՛ ունեցած: Քաղաքական անկախութեան մը բուն ձգտումն մէջ դէպի երկինք չէ՛ որ վերցնելու ենք մեր առջերեսը, այդ կողմէն յոյս չի կայ մեզի, Աստուած արդէն սուր մը բանելու չափ խելք տուած է մեզի, ու մեր գոյութեան այս կռիւն մէջ երբ մեր եաթաղաններուն տակ անօրէն թիւրք մը կը տապալկի Հայ Աստուծոյ համար է՛ն հաճելի ողջակէզն է այդ: Երուպացիները՝ մենէ աւելի քրիստոնեայ ու բարեպաշտ՝ քաղաքակիրթութեան անունով տասնեակ հազարներով կը մորթեն, բայց որ մը Աստուած անոնց ձեռքը չընկնի, որ մը անոնց երկիրը կրակի ու ծծումբի կեր չեղաւ: Մինչև հիմա մենք մորթուող, նահատակուող ազգի մը անունն առած ենք, մեր պատմութիւնը մեր արխունով գրուած է, քիչ մըն ալ մենք մորթնք, նահատակենք. արքայութիւնը միս մինակ հայերու ժողովութիւնը թող չի մնայ, կտոր մը տեղ ալ ուրիշին տանք...: Ետրի՛մ սրտակիցներ, ես ձեր գէնքերուն ղուրպան, ղուրք առաջինները եղէ՛ք այդ սպաննողներուն. հերի՛ք ուրիշները մեր արևը ծծեցին, քիչ մըն ալ մենք զինուորանք այդ կարմիր, զգլխիչ հեղուկով... կը տնկեմ այս գաւաթը հայ մարդասպաններու կենացը...

Անվերջ ծափահարութիւն մը փրթաւ ու մարազը զրգեցուց: Վարժապետը ինքիւրմէն ելած վեր ցառեց, Պաղտասարի վզին պլուեցաւ ու սկսաւ զայն համբուրել անյազօրէն, Չերքէզ ու Մինաս Վարժապետին կը մրցակցէին ու կ'ուզէին ողջ ողջ ուտել այդ տաքարին երիտասարդը զոր հեռուններէն նախախնամութիւնը իրենց պարգեւ դրկած էր:

— Ճիշդ ու ճիշդ հայ մը, ըսաւ Պատաւ Շուշանը, մինչեւ հիմա քաղաքացիներէն չէր չի մինակ տեսած էինք, կռուողներ ալ կ'ըլլան եղբի:

Սեղանին շուրջը բոլորուողները ամենքն ալ Պաղ-

տասարով յափշտակուած էին, բոլոր աղջիկները անոր հետ մտերմանալու անշնանքէն կը վառուէին: Կապետին հայրը, որ կեանքին մէջ հազիւ թէ զգածուած ըլլար, լուռ ու մունջ նստեր էր ու արցունքը իր ալեւոր մօրուէն վրայ կ'իջնէր հեղեղի նման:

Եթէ մարագին բնակիչները քիչ մը ուշադիր ըլլային ղուրքէն պիտի լսէին ծափահարութիւն մը, որ իրենցին կը ձայնակցէր: Լուսեան էր, որ մարագին հարաւի անկիւնը զգմենիներու լայն տերևներուն տակ կ'ծկուած ասպատակներու մէկ բաձն անգամ չէր փայցըներ ու միւնոյն ատեն չէր մոռնար կարճ շրջաններ ընել մարագին շուրջը, ապահով ըլլալու համար թէ ղուրքէն վտանգ մը չկայ:

Կերուխուսը լրանալէն վերջ, Վարժապետին կարգադրութեամբ, գիւղացիները մեկնեցան, և ասպատակները միայն իրենց ընտանիքներուն հետ առանձնացած մնացին: Վարժապետը ինքն ալ մեկնեցաւ: Չէր ուզեր անոնց այդ կարճ տեսակցութիւնը նանգարել:

Ասպատակները՝ իրենց գաւակները գրկերնին և իրենց կիները կողքերուն նստած՝ հազիւ ժամանակ ունեցեր էին քանի մը խօսքեր փոխանակելու, երբ յանկարծ Չագալի սուր ուլուլուն Մինասը ընդոտ ցատկեցուց: Վտանգին նախաձայնն էր, զոր Լուսեան կուտար ղուրքէն:

Կին ու զաւակ՝ ձեռք ձեռքի դէպի անտառին խորը վազեցին: Ասպատակները՝ իրենց գէնքերը խլած՝ պատնէշներու ետին ամրացան: Ու ահա կրկին և կրկին Չագալի ուլուլուն լսուեցաւ ու անոր յաջորդեց պահակներու խորհրդաւոր շփոցը, ու հազիւ այդ ձայները անտառին խորերուն մէջ մարած՝ հրացանի որոտը ձորը լեցուց:

Ասպատակները պաշարուած էին:

(Շարունակելի)

ՀԱՅԱՍՏԱՆԸ (*)

Եւրոպան, որ անբաւելի պատասխանատուութիւններու տակ մնաց Հայաստանի նախորդ ջարդերուն, ա՛լ աւելի օտոկալի պատասխանատուութիւններ ստանձնելու վրայ է յառաջիկայ ջարդերուն համար:

1894-1896ի մեծ կոտորածներէն ի վեր, Ապտիւլ Համիտ զարդած չէ՛ քիչ քիչ օպաննելէ: Անպատիժ մնալէն քաջալերուած, ահա նոր աղէտք մը կը պատրաստէ: Կ'ուզէ վերցնել մէջտեղէն այն բնակչութիւնները — զըլ-խաւորաբար Զեյթունի լեռնականները — որոնք մինչեւ հիմա պրծած էին իր ձեռքէն եւ որոնք ուժը ուժով ետ մղած էին:

Պատունի եւ Մուշի մէջ օպաննութիւնները կը բազմապատկուին: Թրքական զօրագունդները խոնուած են ապագայ նախճիրին վայրը. զինուորները կը տեղաւորեն իրենց նպաննելիք բնակիչներուն տունները: Վաղուան զոհերուն ու աշխարհի մնացեալ մասին միջեւ հաղորդակցութիւնները կտրուած են, կառավարութիւնը ո՛չ գրաւոր լուր ե ո՛չ լրարբեր թոյլ կուտայ որ անցնի: Այս մասին զանազան կողմերէ ճշգրիտ տեղեկութիւններ կ'ընդունինք, ինչպէ՛ Բիւէս ֆիլիպառ շարունակ կուտայ PRO-ARMENIAի մէջ:

Արդ, 1894-1896ին, «քաղաքակիրթ» ազգերը, և է՛ն առաջ՝ Հայերու աւանդական պաշտպան (!) ֆրանսական ազգը, կրցան անգիտութեան չքմեղանքը մէջ՝ բերել: Կառավարութիւնները ամէն բան զիտցած, բայց Եսմէն բան ծածկած էին ժողովուրդներէն: Մեր Հանրապետութեան նախագահը, մեր նախարարները, սիւթեմաթիքօրէն բտած էին խորհրդարանին առջեւ. մեր «բարձր մամուլը» Ապտիւլ Համիտի գործակատարներէն վարձուած էր ստելու համար: Երբ երեք հարիւր հազար մարդկային արարածներ խողխողուեցան լմնցան, վայրագութեան զարհուրելի նրբութիւններովը, վեհանձն Թրանսացիները, Կերմանացիներուն ու Անգլիացիներուն պէս, ապաւէնն ունեցան ըսելու. «Ա՛հ, եթէ ճշմարտութիւնը կասկածած ըլլայինք . . . բայց ամէն բան կ'անգիտէինք»:

Այսօր Եւրոպան ոչինչ կ'անգիտէ: Ոճիրը կը պատրաստուի իր աչքին առջեւ, ու օրը օրին կը նախազգուշացնեն, իրօզեկ կ'ընեն զինքը: Երէկ ան չի լսեց ամբողջ սպան:

(*) Թրանսացի մեծանուն հրապարակագրիկն, «Օտոս»ի 8 հոկտեմբեր րիտիկ մէջ երևցած այս հօգօր յօդուածին բարգմանորտիւնը կը ձօնենք Յեղափոխորտեան դեմ ունացող հայերու վրեժակիկն:

զանոց առաջնորդուած ցեղի մը ազադակը: Ան կը լսէ, այս պահուս, յուսահատութեան վայնասունը վերապրողներուն, որոնք մորթողներուն՝ իրենց զանակները սրելը կը տեսնեն:

Եթէ եղեոնը կատարուի, Արևմտքի վատ ժողովուրդները ա՛լ չպիտի կրնան անոր ամօթը նետել զիրենք կառավարողներուն վրայ, անոնք, ամենքն ալ մեղսակիցներ պիտի ըլլան Մարդասպանին:

Իժմազդ Հայերը, մեր մէջ ապաստանած իրենց եղբայրներուն ձայնովը, օգնութեան կը կանչեն: Խընդրայիրներ կ'ուզեն Տէրութեանց պետերուն, նախարարներուն, թերթերուն: Խեղճ մարդիկ, զորս այնքան մատնութիւններ պեռ չեն բժշկած իրենց վատահումներէն: Իրենց օգնութեան կանչած Տէրութեանց պետերը, նախարարները, խորհրդարանի նախագահները ժապաւինուած են թրքական շքանշաններով:

Թրանսոան քիչ մը կորով կը վերագտնէ՝ այն ալ Պօլսոյ մէջ կոանէ-ֆօնսթան Ընկերութեան շիլ պահանջները պաշտպանելու համար միայն:

Չարը, Թրանսայի արժանաւոր դաշնակիցը, կ'արգիլէ ուսուական մամուլին Հայերու վրայ խօսելու, կ'արգիլէ ուս քաղաքացիներուն Հայերուն օգնելու, կը գոցէ ուսուական Հայաստանի ազգային պարօցները, քսան տարուան սիպերիական քիարանի կը պատապարտէ այն սուսահայերը, որոնք սահմանազուլը կ'անցնին, երթալ՝ իրենց թիրեքիոյ եղբայրներուն հետ՝ կոռնելու և մեռնելու համար:

Թրանսացի նախարար մըն էր Հանօթօն, որ ամենին աւելի շնականութեամբ ծախեց Հայ արիւնը տաճիկ փողոտիչներուն: Ինուս զիւանապէտ մըն է որ ըսաւ. «Երբ ա՛լ Հայ մը չի մնայ, մենք ալ կ'ազատինք հայկական խնդիրէն»:

Եթէ Հայերուն բազը իրենց սեփական ձեռքերուն մէջ չէ, Թրանսայի և Բուսիոյ կառավարութեանց ձեռքին մէջն է: Արդ, սուսական ու ֆրանսական կառավարութիւնները, Հանրապետութիւնը և Չարը, որոնք «կատարեալ համաձայնութեան» մէջ են քօզաք քաղաքականութիւնը ամէն ձեւով պործարելու համար, դեռ խնայուած հայերու բնաջնջումին նպաստել միայն կրնան ինչու:

Շատ պարզ է:

Շատ անգամներ բացատրած եմ արդէն, թէ ինչպէս, քիչ ատենէն, պայքարը անխուսափելի է միջազգային Յեղափոխութեան և միջազգային Յետադիմականութեան միջեւ ամբողջ Եւրոպայի վրայ: Յուշուցած եմ, թէ՛ դաւաճաններու եւ թաքեքաններու երեսէն՝ արևմտեան ժողովուրդներու թուլացուած ընդհանրապէս եւ ֆրանսական ժողովուրդները՝ մասնատրուապէս, պիտի արդիւնէր միշտ յօլափոխական պայթումը մեր մէջ տեղի ունենալէ: Երբ մէջ այս պայթումը հակահարուածով միայն տեղի պիտի

ունենայ: Արեւելքի մէջ և որ պետք է բանկցեն զպատրոյզը:

Հոս բոլոր պատրոյզները թրջած են:

Կրկնած և՛ որ Յեղափոխութիւնը Արեւելեան Եւրոպայէն, Բեղրպուրիէն կամ Պոլսէն պիտի գայ մեզի: Եւ, օսմանեան կայսրութեան մէջ, վճռական դէպքերու ծագումը կրնայ ըլլալ հայկական խնդիրը:

Ասոր համար է որ կառավարութիւնները կը ջանան զայն խեղդել — նոյն ինքն հայ ժողովուրդը ջնջելով:

Կառավարութիւնները իրենց արհեստը կ'ընեն: Մենք ալ մերինը ընենք: Կառավարողները յօտակ կը տեսնեն: Մենք ալ կառավարեալներուն աչքերը բանանք:

Հայաստանի խնդիրը առաջին օղակն է շղթայի մը, զոր կ'ուզենք ամբողջովին քակել, պարզել: Մեր պարկեշտ մարդու պարտականութիւնը կը սփռուի մեզի Ապտիւլ Համիտի զոհերուն դատը պաշտպանել, անդադար Նախ և առաջ Արեւելքի մէջ հզօր գործողութիւն մը վարել է մեր յեղափոխականի երազներուն: Այսպէս, երբ ամէն կերպով միանգամայն մեր խղճմտանքը զահագնելու բարեպատեհ առիթն ունինք, ո՞՞ր պիտի ըլլար չօտուիլ անկից:

Տագնապներու եւ աղէտքներու ծայրայեղութենէն, երկարատե օարօսփէն, յուսահատութենէն վեհերոտ դարձած հայերը դիւանագիտութեան վրայ դրած են միայն յոյսերսին:

Դիւանագիտութիւնը՝ պահպանողական շահերու եւ կառավարութիւններու գործակատար՝ հարկաւորաբար թշնամի է անոնց: Որպէս զի դիւանագիտութիւնը իրմէ միամտօրէն օպատուած միջամտութիւնը ի գործ դնել պէտք է որ եւրոպական կառավարութիւնները այդ բանը ընելու համար նեղը խօթուին կարգ մը դէպքերով:

Անոնք, որոնց շահը կը պահանջէ, անոնց կ'իյնայ գրգռել այդ դէպքերը:

«Դէպքերը գրգռելու» համար, ինչ որ ալ ըլլան անոնք, և ինչ կերպով ալ որ ճարտարութիւն անոնց՝ դրամ պէտք է միշտ:

Ներկայիս, դրամ պէտք է, Ասիոյ մէջ, Հայ ազգին ինքզինքնին պաշտպանել վճած բեկորները զինելու համար, որպէս զի նահատակները առանց վրեժի չիյնան, որպէս զի կտրիճներուն միջոց ընծայուի իրենց ժողովուրդին ու բոլոր ժողովուրդներուն գատին ծառայելու:

Անգլիոյ, Գերմանիոյ և ուրիշ տեղերու գէնքի ու ռազմամթերքի գործարանատէրերը պատուական հրացաններ և անհամար փամփուռներ զիտեն միշտ անցնել բոլոր մաքսատուներուն և բոլոր ոստիկանութիւններուն մէջէն, երբ բաւարար շահ մը կ'ապահովուի իրենց:

Դրամ, բազում դրամ, հո՛տ է՝ ամէն բան:

Աշխարհիս երեսը՝ Հայեր կան, որոնց դրամը չէ՛ որ կը պակսի եւ որոնք՝ նոյն իսկ կը զեղուն անով:

Անոնք յօժարակամ կուտան ամօքելու համար — խորհրդագագահօրէն — իրենց եղբայրներուն դժբաղդութիւնը: Անոնք հարիւր հազարներով, երբեմն միլիոններով կը ծախեն՝ երաշտութիւն, նկարչութիւն կամ բժշկութիւն սորվեցնել տալու երիտասարդ վտարանդիներու, քանի՛ մը դպրոցներ պահելու, եկեղեցիներ կառուցանելու եւ իրենց ծէսէն քահանաներ սնուցանելու համար:

Ո՛րքան պարապը գացած ոսկիներ, որոնք պիտի կրնային այնքան բարիք ծնանիլ: Պոյաչաւիչ եղած և կեղեցիի մը գնով և ժօրուքուր կարգաւորի մը ամօսկանով՝ քանի՛ քանի՛ քառապիսաներ եւ ուսմբեր կարելի պիտի ըլլար մտցնել Չէյթսն... կամ այլ՛ւր:

Այն հայ դրամատէրները, որոնք չեն ուզեր հասկնալ սփիկա՝ պէտք է որ իրենց աւելի կորովի հայրենակիցները հաւնոզեն զանոնք ո՛ր և է փաստի մը միջոցաւ:

Ու նախ և առաջ իրենց խղճին անդորրութեանը համար իսկ՝ որովհետեւ Հայ ժողովուրդը փրկելու իրենց բոլոր պարտականութիւնը չկատարելով՝ եղբայրասպանութեան յանցանքը կը գործեն զրեթէ: Անոնք միևնոյն անպատուիչ մուրումին մէջ կ'իյնան, որքան Ֆրանսան, խողխողուած ժողովուրդին «պաշտպանը»: Իրենց անձնական հանգստութեանը սիրուն՝ անոնք կը օակն միևնոյն «ճիւղին, զոր Ֆելիքս Ֆօսները, Հանթօնները, Լուպէները, Նիքօլաները, Լամատօրֆները, Տէլքաւէները կը գործեն ազամանդէ թուքերու և օսմանեան ոսկիներու սիրուն:

ԻԻՌՊԷՆ ԿՕԻԷ

ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Ե Ի

ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ

Միութեան խնդրին վերաբերութեամբ մեր կտրուկ ու աներկիցի դիրքը՝ ուրախ ենք հաստատելու որ ռօպատուած ոգեւորութիւնը առաջ բերաւ Հայ ժողովուրդին մէջ: Ուրախ ենք հաստատելու որ հետզհետէ մերձեցումի ու փոխադարձ համակրութեան նորայրական զգացումներ կ'արթնան զանազան կուսակցութիւններու պատկա՛ռող հայերու մէջ, որոնք՝ դժբաղդ թիւրիմացութիւններու եւ առաւել կամ նուազ զիտակից թելազրանքներու երեսէն՝ վարժուած էին խորթ աչքով նայիլ իրարու:

Մասնատրապէս յեղափոխական օսկաններուն եւ ընդհանուր կերպով Հայ մամուլին կը մնայ վայրկեանին ճշգրիտ ու խղճահար ըմբռնումն ունենալ ու իրենց ընթացքն ու խօսքերը սրտանց պատշաճեցնել անոր:

Մեր անկեղծ ու համարձակ յայտարարութիւններէն յետոյ, մինչեւ հիմա ինչ որ գրուեցաւ, ինչ որ ըսուեցաւ «Միութեան» մասին՝ մեզի կազդուրիչ համոզումը կուտայ թէ կարևոր քաջ մը առնուեցաւ արդէն դէպի բաղձալի նպատակը:

Թէպէտև տակաւին՝ հինէն մնացած տեսակ մը տխուր վարժութեամբ՝ կը գտնուին մարդիկ, որոնք «Միութեան» առիթով իրենց ցոյց տուած խանգալաւորութեան մէջ իսկ՝ չեն կրնար ազատագրուիլ կուտակեցական անձուկ մտահոգութիւններէ ու «Միութեան» համար մեր յայտնած զոհողութեան բացարձակ պատրաստութիւնը գնահատած ատենին իսկ չեն կրնար ինքզինքնին արգիլել՝ անցողակի՝ սանկ թեթև մը խայթելէ, բայց մենք հաւատք ունինք որ այդ վիրաւորիչ կամէութիւնները ինքնին պիտի դադրին «Միութեան» իրականացումին շուրջը գոյացած ժողովրդական հզօր շարժումին առջև:

Մենք, մէր կողմէն, ո՛չ միայն կը զգուշանանք կուտակեցական փափկանկատութիւններ վիրաւորելէ, այլ նոյնիսկ պիտի գիտնանք կամովին լռել ուրիշներու կողմէ մեզի ուղղուած զրգոյիչ ակնարկութիւններուն դէմ:

Ու կոչում կ'ընենք մասնատրապէս բոլոր յեղափոխականներուն, որպէս զի ետ կենան անձնատուր ըլլալէ ու եւ անբարեխիղճ մշտմի, ո՛ր է կրքոտ նկատումներու, որոնք երբեմն աննշմար կ'անցնին, բայց որոնք կրնան գուցէ մահացու ըլլալ «Միութեան» իրագործումին:

Գոհութեամբ կը տեսնենք որ արտասահմանի Հայ մամուլը՝ արհամարհելի բացառութեամբ մը՝ հասկցած ըլլալ կը թուի այս բոլորը, ու կը սիրենք յուսալ որ այս ուրախալի երևոյթը պիտի շարունակուի եւ հետզհետէ պիտի ընդհանրանայ. կը սիրենք յուսալ որ ատելութիւնները վերջնապէս պիտի լռեն, ու նենգաւոր ոգորումները իսպառ պիտի գազրին, որպէս զի վայրկեան մը չխանգարուի դէպի ազնիւ նպատակը ժողովրդային խոյանքին ներդաշնակութիւնը եւ որպէս զի իրականանալ խորապէս ու տեսականօրէն Յեղափոխական Եղբայրութիւնը:

ԳԹՈՒԹԵԱՆ ԶՈՂԵՐԸ



Գ.

Խորունկ ու վերջնական գաղափար մը կազմելու համար Գթութեան՝ մեր ազգային բարքերուն այլասերու, մին մէջ վերջին տարիներս կատարած աղէտաւոր դերին վրայ՝ պէտք է յիշենք նորէն այն ձախող ու տխուր փորձը, զոր ըրաւ՝ իր կեանքի վերջալոյսին՝ հայ ծերութեան մը յեղակարծ զարթնումին մէջ խանգաղատած մեծանուն անձնատուրութիւն մը:

Ո՛վ չի դիտեր, ո՛վ չէ լսած գոնէ Պուրվատ Մօճբանոսի համբաւաւոր Ապաստանարանը: Անոնք սակայն, որ պատեհութիւնն ունեցան զայն յօռն ճանչնալու, անոնք միայն պէտք եղածին պէս գիտեն այն բնատիպ ու ետարօրինակ ընդունակութիւնները, որոնց ամօթալի ապացոյցները տուաւ փախստական Հայը՝ արտասահմանի մէջ զինքը դիմաւորող ազգային ու օտար Գթութեան առջև:

Պոլիսէն ու գաւառներէն գաղթային հոսանքը սկսեր էր ու արտասահմանի ամէն կողմերը հասած, խոնուած էին արդէն շուարած ու թշուառ հայեր, երբ Բարիգի Ապաստարանը բացուեցաւ:

Առժամանակեայ հաստատութիւն մըն էր ատիկա, որով Հայ Բարիբարը՝ իր ուշացած ազգասիրութեան անկեղծ ու ցաւազին վրդովմունքին մէջ՝ մտածեր էր հանգրուան մը ընծայել՝ Բարիգ ինկող՝ ընտանիքի տեր ու անկարող իր հայրենակիցներուն, որպէս զի միջոց ունենան անոնք՝ օրուան հացին անմիջական, բոնաւոր ու անգամալուծող մտահոգութենէն ազատագրուած՝ իրենց նիւթական անկախութեան հետամտելու:

Ապաստանարանին բացման լուրը՝ փրկութեան աւետիսօր մը պէս՝ տարածուեցաւ, քիչ ատենէն, արտասահմանի ամենահեռաւոր անկիւններն իսկ:

Իմացեր էին, օր մը, ու կանգ առեր՝ Փախուստին կամ Անտուրութեան ճամբաներուն վրայ, ու հիմա վազն ի վազ կը հասնէին ամէն կողմէ: Օ՛ տոգոյն ու հապըշտապ տողանցութիւնը բոլոր այդ բաշխուող մատաղի վազող, անոր քաշող, անդիմադրելի հոտէն-խննդեցած տարազիրներուն:

Ուղղակի Հայրենիքէն չէին իգար ամենքն ալ: Բարիգը տեսնել ձրեաբար, անոր վիթխարի վայելքին յօտենալ, քօկոտութիւն... Ինչ առիթ, ինչ փորձութիւն: Ու գտնուեցան եղկելիներ, որոնք արտասահմանի մէկ համեստ անկիւնը իրենց տիրացած կամ տիրանալու վրայ եղած խոնարհ այլ անկախ դիրքը ձգեցին, իրենց նիւթա-

կան ազատագրումին ճիգը, գրեթէ լրումին հասած, ընդհատեցին, Բարիզ վազելու համար:

Քանի մը շարաթնորու մէջ, Ապաստանարանը լեփ լեցուն էր արդէն, ու դեռ մէկ կողմէն կը հասնէին հեւի հեւ նորանոր անապաւէն հայեր, երբեմն հոծ ու տրտու մական խումբերով:

* *

Ապաստանարանը այլանդակօրէն նկարագեղ ու ուսման մրտկող գանազանութիւն մը կը ներկայացնէր հիմա բնակիչներու: Հայ գրեթէ բոլոր դասակարգները իրենց ներկայացուցիչներն ունէին հոն: Սնանկացած վաճառականը, կործանած խանութպանը, իրենց ընտանիքովը, գաւառացին, պոլսեցին, գործաւորը, վաճառականի զբոսորդը, զէյթունցի կտրիճը, ուսանողը, ուսումնական երիտասարդը ու անուս ծերուկը խառն ի խառն կ'եռուզեալին այդ հին ու կիռաւեր տան մէջ, որ իր խարխուլ, սեցած պատերով ու մաշած, ճանշող սանդուխտներով ասիական խանի մը ներքնակողմը կը յիշեցնէր:

Այս ընկերային տարբեր աստիճաններէ զտրած ու միեւնոյն անողոք բազմին կիցերուն տակ իրարու հաւատարմով՝ թշուառութեան միակ ու ցաւապին դառակարգը կազմած հայերը չէին կրնար սակայն դեռ գորար հանդուրժիլ, չէին կրնար իրարու հետ եղբայրակցիլ: Պոլսեցի նախկին շուկացին խորշովով մը կը կրէր գաւառացի փախտականին հպումը, բռնութեան բարիզեան խորխու ուսանողը պժգանքով կը համակերպէր խարբերողի գաղթականին հետ սեղանակցելու դատապարտութեանը: Ատկից, հակառակութիւններ, պզտիկ արհամարհանքներ, խուլ առեւտրութիւններ, կատաղի նախատինքներ ու անանական յեծկերութիւններ, որոնք Ապաստանարանը յարատե ու յարածուն փոթորիկի մը մէջ կը պահէին: Քիւրտին ու թիւրքին բիրբուն անջեւէն լեղապատառ փախչող այդ հայերը՝ Ապաստանութեան երկինքին տակ առիւծ կտրած՝ տարօրինակ ու ապերասան մը մը մը կը հնրոսանային զիրար բզբուելու, զիրար փառատելու մէջ:

* *

Ապաստանարանին բնակիչները՝ իրենց վիճակին վարժեալ, զայն բնական, ճակատագրական վիճակի մը պէս ընդունած, ընդգրկած՝ ալ անկից դուրս ելլելու ո՛չ մէկ ճիգ կ'ընէին, ո՛չ մէկ կամէութիւն ցոյց կուտային: Անոնք հանգարտօրէն, պայծառօրէն կը սպասէին որ իրենց արժանաւոր պաշտօններ յանձնուին, կամ լեցուն ճանապարհածախտեր հայթայթուին... Ամերիկա երթալու համար:

Երէկ օովալլուկ թափառողները սկսան կամաց կամաց դժուարահաճ դառնալ: Գթութեան սեղանին վրայ,

ամենքն ալ, կերակուրներէն զժգո՛հ կը տրտնջային, կը բողոքէին:

— Աս ի՞նչ է... աս կ'ուտուի... ինքը (Ապաստանարանին Բարբարը) աստիճակ կ'ուտէ իր տունը...

Լեցուն քեմերներով Ամերիկա գաղթող գաւառացիներ կը գտնուէին, որոնք—ու առիկ է՛ն քստմեղի անարգութիւնն էր, որուն կարող կ'ըլլային մարդկութիւնը մնտող կարգ մը հայեր—չքաւոր ձեւացի էին ճամբորդութիւնը ձրի ընելու համար: Ասոնք՝ Ապաստանարանին յաւիտենական լուրիայէն ու փիլաւէն ձանձրացած ու չկրնալով դիմանալ համովբաներ մը ճաշակելու մարդկային, անգիմարդիկ—մանաւանդ երբ զոհացումին միջոցը չի պակսիր—փորձութեան՝ վերը, իրենց սընտուկներուն մէջ դուրսէն գնուած ուտելիքներ կ'ունենային յաճախ, բայց առիկա չէր արգիւր զիրենց որ՛ճաշի ժամերուն՝ վար իջնէին նորէն, իրենց բաժինը անսելու: Վերակացու տիկինին չորսդին կը օլջտային ու երկնային անմեղութեան հեզ ու տրտում շեշտերով կը մրմնջէին անոր:

— Մտաւ՛մ, իմ կաթն կ'ուտա՞ք... մէջը շօքօլա պիտի դնեմ, հակիթն կուտա՞ք, կ'աղաչեմ, այսօր վար չպիտի իջնամ, քիչ մը տկար եմ...

Լուրիան ու բիււրը դաժանօրէն կ'արհամարհէին, բայց պիթիթէք մոլեգնօրէն կը գնահատէին:

* *

Ու Գթութեան տունը՝ ապականութեան ու անբարոյացումի պարոզ մը եղաւ:

Փորքերնին կուշտ ու վաղուան հոգեբէն փրկուած՝ ապաստանեալները—կեանքով ու խանդով զեղուն երիտասարդներ մեծ մասամբ, որոնց ամենի ախորժակները կը զրգուէին Բարիզի մթնոլորտը լեցնող վայելքի հոտէն—ուկան անառակնալ, յոտնանալ:

Յորեկին, Ապաստանարանին առջեւէն անցնող կիներուն ու աղջիկներուն վրայ խելախել ու յայրաա ճիչեր ու ժէսթեր կը նետէին, կամ երբեմն պատուհաններէն իրենց անութեան է՛ն անհերքելի ապացոյցները կուտային դիմացի զրացուհիներուն: Գիշերը դուրս կ'ելլէին ու իրենց տրտում մոլուցեքն տարուած՝ խաւարին երկայնքը կը զեզերէին ու՝ Գթութեան ողորմութիւններով՝ կսկծալի ու հոգեմաշ ախտեր կը ժողվէին Բարիզի գիշերին շիւ անկիւնները իրականացող զիրին ու գարշելի ցոփութեանը մէջ:

Ընտանիքի հայերը գայթակղեցան, զայրացան: Դրացիներու եւ անցորդներու կողմէ գանգաւներ եղան ուտականութեան: Հայասեր հզօր պաշտպանութիւններու շնորհիւ՝ հետեանք շտրուեցաւ ատոնց բարեբաղդաբար, ու Հայութեան պատուոյն սպասացող խաղբութիւն մըն ալ խափանուեցաւ:

Բայց Ապաստանարանը անիծեալ տունն էր այլ ևս, կասկածելի ու զօրխային որջը, որուն առտառոց ու մեծածխոք գոյութիւնը կը յաճախէր թաղին գրեթէ բոլոր բնակիչները:

* * *

Ապաստանարանին շուրջը, օտարներու կողմէ գոյացած կարեկցութեան ու խնամքի բարեացակամ տրամադրութիւններն ալ հետզհետէ դադրեցան, լիցցան:

Փրանսացի տիկիներ, որոնք մարդասիրական մղումով մը ու մանաւանդ հայ աղէտընորուն ահագնութենէն թելադրուած ինքնաբերաբար յօտեցեր էին Ապաստանարանին ու շահագրգռուելու էին հոն գտնուող հայերուն ճակատագրովը մէկիկ մէկիկ զգուանցով հեռացան անկից:

Անոնցմէ մէկը մանաւանդ որ ամենէն աւելի բարիկամեցողութեան ու իրաւան ու անկեղծ կարեկցութեան շօշափելի ու կրկնակի ապացոյցներ տուած էր մեր ապաստանեալ հայրենակիցներուն՝ ամենէն անարժան ու վարնոց կերպով շնորհակալուեցաւ անոնցմէ:

Բողջբարկան բարի հոգի մըն էր Օր. Թ^{**} որ Ապաստանարանին բացումէն ի վեր, ամէն օր հոն կը հանդիպէր, քրոջական ու սրտցաւ փութկոտութեամբ մը: Կրցածին չափ զգնութիւն կը բերէր, կը պարպէր Գթութեան դրան ետին ու կ'երթար, յաջորդ օրը նորէն բենաւոր վերադառնալու համար: Շատ հեղ կը յամենաբ Ապաստանարանին մերկ ու անշուք խօսարանին մէջ: Ամենուն խնամոտ բառ մը, խանդաղատագին նայուած մը ունէր, ամենուն վիճակովը կը շահագրգռուէր, ու շատերուն գործ գտեր, շատերը տեղաւորեր էր արդէն:

Օր վը օակայն ազնիւ օտարուհին ալ՝ ամենէ անարգ ու ամենէ պժգալի եղանակով վիրաւորուած, նախատուած՝ հեռացաւ Ապաստանարանէն, ալ հոն ոտք չկոխելու զգուանցով: Ահա՛ եղելութիւնը:

Ապաստանարանէն տղայ մը, որուն երեք անգամ գրամ տուած ու ամէն տեսակ խնամքներ շտալած էր արդէն, չորրորդ անգամ կը զիմէ իրեն՝ կրկին գրամ ուզելով: Բարեօրոտ աղջիկը կը մերժէ պարզապէս մուրալու չվարժեցնելու համար հուժու ու ոտքը—ձեռքը բանող ապաստանեալը: Այս մերժումը է՛ն անարդար ու է՛ն կամայական արարքը՝ մը պէտ կ'ըմբոստացնէ խրոխտ հայորդին: Շունչը շիտակ ընկերներուն քովը կ'առնէ: Լուսաւոր ցաղափար մը յղացած է իր բարեբարուհիէն վրէժ լուծելու համար:

— Բո՛գ բառին ֆրանսերէնը ի՞նչ է, կը պոռայ ահեղօրէն իր ընկերներուն, որոնք այս յեղակարծ ու կատաղի հարցումէն օահմակած՝ իրարու երես կը նային ապսւշ ապսւշ: Կարիճին նպատակը հասկնալնին վերջը՝ միահամուռ խանդավառութեամբ մը իրար անցած՝ Ապաստանարանը տակնուվրայ կ'ընեն տենդատօրէն, ֆրանսազէտ բազդակցի մը ի խնդիր: Վերջապէս կը գտնեն՝ արդէն տասնեակ մը տարի Բարիզի մայթերուն վրայ

կօշիկ հինցուցած նախախնամական ուսանող մը որ՝ պուլվառտիկի մը արհամարհոտ վեհանձնութեամբը՝ կը նետէ անոնց խելայեղօրէն փնտուած, մաղթուած պիղծ բառը:— Յնձութիւն, խնձղանք, յաղթութիւն...: Բառը փութիկի մը կը փրցնէ Ապաստանարանին մէջ:

Յաջորդ օրը քօտիճելի տեսարան մը կ'անցնի խօսարանին մէջ: Օր. Թ^{**} հազիւ ներս մտած է, երբ իր երիտասարդ բարերարեալը՝ անոր առջին ցցուելով՝ ոճրագործ մուլեգնութեամբ մը իր երախտագիտութիւնը կը փօխէ անոր երեսին:

— Բիւրք'ն... րիւրք'ն... րիւրք'ն...

Խնձ աղջիկը՝ յանկարծակիի եկած՝ ձայն ձուն չի հաներ: Երողկանքի ու ցաւի անպատու աչքերով կը նայի վայրկեան մը փճացած, անասնացած հայուն: Յետոյ դուրս կ'ելլէ, զուարճացած ու վրէժխնդիր նայուածներուն առջեւէն ուրիշ ապաստանեալներու, որոնք՝ հանդիսատես այս անլուր տեսարանին՝ անկարող կ'ըլլային իրենց շնական ու պոռնիկ խնդուքը զսքելու:

* * *

Եւ օր մըն ալ Ապաստանարանը գոցուեցաւ: Բարերարը զգացեր էր իր գործին բոլոր ձախող հետեանքները ու պարտաւորուել էր այդ որոշումը տալու: Ասիկա իր ձերբութեան տրտութիւններէն մէկը եղաւ, է՛ն գառնը գոռէ:

Ապաստանեալները ասէն մը Բարերարին շուրջը սլքտալէ, անոր ձերբութիւնը վրդովիլէ յետոյ, մէկիկ մէկիկ հեռացան Բարիզէն, տանելով իրենց հետ ապսկանութեան ու փութեան աղէտաւոր ու տարափոխիկ սերմեր:

Ու, վերջապէս, կսկծալի բան մը եղաւ այդ մարդկային խլեակներուն ճակատադիրը: Գթութեան զօհերն եղան անոնք ալ: Ու յանցանքը իրենցը չէր:

Անօգնական ու անտերունջ ձգելու էր զանոնք Օտարութեան ճամբաներուն վրայ, միօ մինակ: Ո՞վ գիտէ, գուցէ փճանային, լուս ու անյիշատակ մութ, անձանթ անկիւններ ինկած... Թերեւս յաղթէին ճակատադիրն... կամ թերեւս անոնց մեռած հոգիները՝ արգաւանդ ու զեղեցիկ ատելութիւններ՝ քանգումի ամենի ծարաններով՝ վառէին յանկար՝ ու Գիշերին խորը շղացող իրաւարար պաշոյններ գնէին անոնց ձեռքը... Թերեւս՝ Եղեռնին առջեւէն փախած այդ ստրուկները մարդասպաններ ծառանային Անթութեան մողեզին խաճատութիւններէն գիտակցած, վերածնած:

Մաւրալէն աղէկ չէ՛ր ըլլար միթէ ափկա...

ՓԻՒՆԻՔԻՆՅ ՉՈՐՏ ԿՈՂՄԸ

ՊՆՆՆՆՆՆՆՆՆ

«Հիւանդ Մարդուն» փիճակը երթալով կը ծանրանայ: Հայկական և Մակեդոնական խնդիրներէն գնտ, որոնք՝ եթէ բարձրար լուծուի մը շտանան, կրնան ուշ կամ կանուխ ընդհանուր հրդեհը բոնկցնել, հիմա ալ Ալպանական շարժումներն են որ կոնգան կը միանան անգամ մըն ալ ցնցելու տաճիկ բռնապետութեան խախուս հիմերը:

Երբազի որչին մէջ հպատակ ժողովուրդներու բռնաշնչումը ծրարող մօլլա-գիւանապետները մեծ յոյսեր դրած՝ էին Ալպանացիներուն վրայ, որոնք տաճիկ բանակին մէջ իրենց կամաւորներն ունէին եւ որոնց հաւատարիմ ծառայութեանց պէտք կը գտար Համիտ, ամէն անգամ որ Պալքաններու մէջ քրիստոնեաներու ապստամբական շարժումը արինով ու բարբարոսութեամբ զսպելու իր դիւային քաղաքականութիւնը գործադրել փորձուէր:

Հեռագիրները կը հաղորդեն սակայն, թէ հոն, Ալպանիոյ մէջ ալ պայմանները փոխուած են և ամբողջ Էլպասանը ապստամբական վիճակի մը մէջ կը գտնուի: Տաճիկն պէ՛մ դարձած են այն եւթադանները, զորս թոյլ տուած էր ալպանիացիներուն գործածել՝ պուխ բարձրացնող քրիստոնեաները մորթելու համար:

Ժողովուրդը թիւրք կառավարութեան պաշտօնեաներուն պէ՛մ ելած է և գինուորական իշխանութիւնները շն կըրցած խաղաղեցնել զայն:

Գիտենք արդէն թէ ինչ կը նշանակէ «խաղաղեցնել» բառը Համիտի կամքը գործադրողներուն համար, որոնք իրենց վարպէ կատաղութեանց և զօխախին հալածանքներուն մէջ կը սանձահարուին, միմիայն երբ իրենց որսին վրայ ինքնապաշտպանութեան ուժ մը կը նշմարեն: Ալպանացիներուն հրացանները իրենց բնական պերը կատարած ըլլալ կը թուին, որուն առջև զիջանիլ կը ստիպուի մեծ մարդակերը:

Ալպանական ցոյցերուն, շարժումներուն հետեան, թով Էլպասանի մէջ, բոլոր խանութները կը սոսկան, ու անիշխանութիւն կը տիրէ քաղաքին մէջ, մինչև որ սուլթանը հեռագրով մը կը հրամայէ որ բոլոր թիւրք պաշտօնեաները անմիջապէս հեռացուին ու անոնց տեղ դրուին բնիկներ: Սուլթանը՝ պիճալով ուժին առջև վրդովուած, իր ազուէտի դիւանապետութիւնը կուզէ բանցնել ու քանի մը խոստումներով կը ջանայ սիբաշահի Էլպասանի ապստամբ ժողովուրդը: Եւ իր հարաւորով (?) պաշտպանութեան շօշափելի ապացոյց մը տուած ըլլալու համար, անմիջապէս կը հրամայէ տասաներկ տուրքէն ազատ թողուլ քաղաքը:

Ալպանացիները սակայն, մէկը միւսին միտք ուտելէ հետո, առանց մէկգլխի խճճելու ունակութեան անձ, նատուր ըլլալու, վարկենին վճռականութիւնն ըմբռնած, իրենց բոլոր ուժերը կուզեն մէկ նպատակի մը իսպաս դնել, և Համիտի մտատանջութիւններէն ու դժուարութիւններէն օգտուելով, օրէ օր ամէն տեսակ ազատութիւն ձեռք բերելու վրայ են:

Տարաձայնութիւններ կան, թէ իտալական և տաճիկ կառավարութեանց մէջ համաձայնութիւն մը գոյացած է, որով իտալիան պիտի յարգէ թիւրք կառավարութեան Ալպանիոյ վրայ ունեցած իրաւունքները, իսկ թիւրքը արտօնութիւն պիտի տայ իտալիային որպէսզի Ալպանիոյ մէջ հաստատէ զպրոցներ, հիւպատոսարաններ առևտրական գործակալութիւններ: Սակայն թայլգի թղթակիցը՝ Պալքաններու ընդհանուր վիճակին վրայ խօսելով, կը յայտնէ թէ Ալպանիոյ գործերուն վիճակը օրէ օր վատթարանալու վրայ է: Կեդրոնական Ալպանիոյ մէջ սուլթանին հեղինակութիւնը պայտիւն ունենալէ թողորսին գալուստ է: Թիւրք զօրքերը՝ որոնք երկար ժամանակ ամսական ստացած չեն, պարբերաբար կը յարձակին և կը թալանեն պիւրքը եւ իրենց հետ կը տանին վրամ, ուտելիք, ինչ որ գտնեն:

* *

Փրանքո-թիւրք մէ՛ծը տակաւին կարգադրուած չէ. այս մասին հակասական լուրեր կը հասնին եւրոպական մամուլին: Մէկ կողմէ կը հեռագրեն, թէ արտաքին գործոց նախարար Թէվֆիկ փաշա կ. Պոլսոյ ուսական պեսպանին անգամ մըն ալ պիճած ըլլալով, Փրանքո-թիւրք մէ՛ծին համար ուս կառավարութեան միջամբաստութիւնը խնդրած է, որուն Պ. Չինովիէֆ պատասխանած է որ Դուռը ուրիշ բան չունի ընելիք, եթէ ոչ Փրանսայի պահանջներուն բացարձակ գոհացում տալ: Միւս կողմէն լուր կայ, թէ Պ. Չինովիէֆ Բեդրեպուրի հաղորդելով Փրանսայի պիճումը, թելապրած է որ այս առթիւ Փրանսական արտաքին գործոց նախարարն և Պ. Ռուսոֆին մէջ տեսակցութիւն մը կարեւոր է, եւ Դուռը Ռուսիոյ հաւանական միջամտութեան արդիւնքին կը սպասէ և այժմէն Պանք Օթոմանի հետ փոխառութեան մը մասին կը բանակցի Լոսանայի պահանջը վճարելու համար:

Երբ թիւրք կառավարութիւնը զբաղեցնող և անոր ծանր մտահոգութիւն պատճառող այսքան բարդ խնդիրներ մէջտեղ կան, Հայաստանի վիճակը ծայրախորտէն կը շարունակէ վատթարանալ: Մասնաւորապէս Մուշի եւ Սառնի կացութիւնը մտատանջութիւն կը պատճառէ դիւանապետական շրջանակներու մէջ, ուր կը կարծուի թէ Փրանսական պեսպանը՝ երբ

Պօլիս պանայ, իր կառավարութենէն որոշ հրահանգներ պիտի տանի Հայաստանի տագնապալի կացութեան վերջ մը տրուելու համար:

Միշտ ստիպուած ենք սակայն յիշեցնելու մեր ժողովուրդին, թէ որքան ալ օրուան քաղաքականութիւնը նպաստաւոր ու յուսադրիչ ըլլալ թուի, ոչինչ բարիք կրնայ ծագիլ մեզի առկէ, եթէ մեր գոյութիւնը, մեր կենդանութիւնը վկայող պատրաստականութեան մը մէջ չգտնուինք:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՕՑՈՒԹԻՒՆԸ. Հեռագիրները ի մացուցին թէ Կ. Պալատը տուական դեսպանատունը՝ Հայաստանի տես հրապատուներուն իրեն հաղորդած տեղեկութեանց վրայ՝ յանդիմանական եօրս մը ուղղած է Դրան, որուն ուղարկութիւնը կը հրահարէ Հայաստանի կացութեան վրայ, ուր կողոպուտներն ու ջարդերը կը շարունակուին: Երջտըգէն հրամաններ հեռագրուած են թոյր գաւառի կառավարիչներուն, առ զիչելու համար բաւերական ներկայացումները և կամ որիչ հաւաքումներ:

ՄԱԿԵՆՈՒՆԻԱ. Թիւրք զօրքերը՝ Թապանեֆէս իսակիւպ-Սէլանիկի երկարադիւր գծին վրայ, Մակեդոնացի Պոզկար խոսքի մը հետ ընդարձակ ունեցան: Կիսիք արիւնանեղ եղաւ, բազմաթիւ պոզկարներ սպաննուեցան: Պրատիւքօի մօտ, թիւրք զինուորները կրակը ին մակեդոնական Բօմիթի անկումներուն վրայ, որունը տան մը մէջ ապաստանած էին եւ որոնցմէ 7ը սպաննուեցան և չը փախան: Խոսքարկութեան մը կատարուելով քանի մը ուժանակներ գտնուեցան տան մէջ: Մակեդոնական Բօմիթիին կողմէ կազմակերպուած միջինի մը մէջ, ուր 20,000 հոգի ներկայ կը գտնուէին՝ Պոզկար կառավարութեան կողմէ քոտարկուեցան՝ Բարբորիս նամակին մէջ պոզկարներու ղեկ եղած հաւաքանքը դադարեցնելու համար: Եոյն միջինը որիչ կողմը ուղղեց վեց. Պետութեանց, հրահարելով գանդը Պերլիսի պաշտպանութեանը գործադրել, երէ կ'ուզեն յեղափոխական պայքոյմի մը առաջն առնել:

ԱԼԳՈՒՆԻԱ. Ալպանիոյ Էլպասան քաղաքէն դեռ նոր Արիւն ժամանող ձանրողները կը հաստատեն թէ անրողը քաղաքը՝ թիւրք կառավարութեան պաշտօնեաներուն ղեկ եղած ապստամբական վիճակի մը մէջ կը գտնուի:

ԲՈՐԵՆԿԱՄԻՆ ԽՐԱՏԸ. Գերմանիոյ դեսպանը, ճաշկերոյթի մը միջոցին, ստիպած է սուլթանը որ միջոցներ ձեռք առնէ ներքին գաւառներու ողբալի կացութիւնը դարմանելու համար:

ՄԻՍ ՍԹՕՆ. Վաշինկթօնի կառավարութեանը շատ մտահոգ է Միս Սթօնի վիճակին վրայ: Հակասակ վերջին հեռագիրներուն ըստին որոշ կերպով չգիտցօտիք թէ ո՛ր ապաստանած են առեւանգիչները, բայց կը հաստատուի թէ սահմանագլխին մօտերն են, անանկ որ պիտի կրնան Պոզկարիս մտնել, երէ թիւրքերը զիրենք հալածեն:

Այս առիտ Պոզկար կառավարութեանը կը յայտարարէ, թէ առեւանգիչները բրքական ճիղին վրայ կը գրուեն և չի կրնար ընդունիլ որ իրեն վերագրուած մեղսակցութեան մը Մակեդոնիոյ Բօմիթի անկումներուն հետ, որունը Միս Սթօնի առեւանգիչները ըլլալ կը կարծուին: Վաշինկթօնէն կը հեռագրուի Պ. Էտտի, որ Միս Սթօնի ազատման համար պահանջուած գումարը դրկուի:

ՖՐԱՆՍՈՒԿՈՆ ՀԻԻՊՍՈՍԸ. Սելանիկէն հասած հեռագիր մը կը հաստատէ թէ թիւրք զօրքերը յարձակած են Մօնասթի ֆրանսական փոխ հրապատուին վրայ:

Հ Ա Ս Ց Է

«ՆՈՐ ԿԵՆԿ»-ի վերաբերեալ նամակ ու բաժնեգիր լրկել հետեւեալ հասցէին.

REDACTION DU "NOR-GUIANK"
27, BATHURST GARDENS,
KENSAL RISE,
LONDON, N. W.
(ENGLAND.)

ՆՈՐ ԿԵՆԿԻՔ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին եւ 15 ին: Բաժնեգիրն է Եւրոպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 տոլար:

